

2793

Առնկեկագիր

Թիֆլիս

9(47.925)

թ-64

Թիֆլիս

1910

9(47.925)

թ. 64

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԹԻՖԼԻՍԻ

ՎԱՆԱՅ ԱԻԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՕՆԱ-ՊԱՏ-
ՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁ-
ՆԱԺՈՂՈՎԻ

1908 ապրիլ 5—1910 ապրիլ 5.

70



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԿՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՈԼԻՑ 7
1910

2012

9(47925)

Թ-64



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

370

9302-ՏԵ

ԹԻՖԼԻՍԻ

ՎԱՆԱՅ ԱՒԱԳ ԵԿԵՂԵՅՈՒ ԿՐՕՆԱ-ՊԱՏ-
ՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆԶ-
ՆԱԺՈՂՈՎԻ

1908 ապրիլ 5—1910 ապրիլ 5.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԿՏՐԱԶԱՐԲ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՈԼԻՑ 7
1910

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻ

1011416 075 28-9052

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻ

5-7274-ահ
7

12 0 04

ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Նախագահ

1. Առաջնորդ Թիֆլիսի թեմի՝ սրբազան Գա-
րեգին Արքեպիսկոպոս

Անդամներ

2. Աղանեան Գիւտ. ա. քահ. (Թանգարանի
կառավարիչ)
3. Բաբեան Արշակ
4. Յարութիւնեան Իսահակ
5. Տէր-Յարութիւնեան - Յարոյ Նիկողայոս

ՏԵՂԵԿԱԳԻՐ

**ՎԱՆԱՅ ԱԻԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԾՆԱ-ՊԱՏՄԱ-
ԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈ-
ՂՈՎԻ 1909 և 1910 թ.**

1908 թ. Ապրիլի 7-ին կայացած «Ղուկասեան Մրցանակաբաշխութիւնից յետոյ՝ մինչև 1909 թ. ապրիլը Յանձնաժողովս ստացել է հետևեալ աշխատութիւնները.

№ 1. Պատմութիւն հայ գաղթականութեան. յօրինեց Արշակ Ալաոյաճեան՝ բաղկացած 729 մեծադիր (փոստի թուղթ) ձեռագիր էջից ու յաւելուած. Առաջնորդական վիճակներ-տպագիր 90 փոքրադիր էջ: Աշխատութեանը կցուած են 20 նկարած տախտակ-քարտէզներ:

№ 2. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիների հետ. հայկական և ասորական աղբիւրների համաձայն ուսումնասիրեց Երուանդ վարդապետ Տէր-Մինասեան: Տպագրուած Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի ծախքով. ս. էջմիածին 1908 թ.:

№ 3. Կ. Յ. Բասմաջեան. Լևոն Ե. Լուսինեան, վերջին թագաւոր հայոց: Բաղմաթիւ պատկերներով. տպագրուած Պարիս 1908 թ.:

№ 4. Կենսագրութիւն Սարգիս արքեպիսկոպոսի Սարաֆեան և Ժամանակին հայ կաթողիկեայք. գրեց

Հ. Գրիգորիս Ծ. Վ. Գալէմբարեան, Մխիթարեան ուխտէն: տ պ ա գ ռ ու ա ծ Վիեննա. 1908 թ.:

№ 5. Սաչատուր Բաբայեան, բագրատունեաց նախարարութիւնը (պատմական ուսումնասիրութիւն) տը-պ ա գ ռ ու ա ծ Թիֆլիս 1908 թ.:

№ 6. Բնակեցութեան տնտեսական կամ բառարանական ստատիստիկա և հայերէնը. ձ ե ո ա գ ի ռ քառածալ էջ. 250, աշխատութիւն ծածկանուն հեղինակի:

№ 7. Իդիպոս արքայ, Սոփոկլի. ողբերգութիւն 5 արար. թարգմանեց յանգաւոր ոտանաւորի Սմբատ Բիւրատ-ժիւլ Լազուայի ֆրանսերէն տառական թարգմանութենէն. ձ ե ո ա գ ի ռ 108 փոքրադիր էջ:

Յանձնաժողովս որոշեց վերոյիշեալ աշխատութիւններէց №. №. 2 և 3 չենթարկել մրցութեան՝ իբրև այլ անհատների ծախքով արդէն տպագրուած աշխատութիւններ՝ համաձայն «Ղուկասեան մրցանակի» կանոնադրութեան դ. յօդուածի 3 կէտի ոգու. նոյնպէս մրցութեան չենթարկել № 7. իբրև օտար լեզուից թարգմանութիւն՝ նոյն կանոնադրութեան դ. յօդուածի 1 կէտի հիման վրայ: Մնացած աշխատութիւնների մասին ցանկանալով իմանալ մասնագիտական պատրաստութիւն ունեցող անձանց կարծիքները, Յանձնաժողովս որոշեց ուղարկել հետեւեալ յարգելի անձանց՝ քննելու ու իրենց պատճառաբանուած կարծիքը գրաւոր յայտնելու:

№ 1. Աշխատութիւնն ուղարկուեց նորին Սրբադնութիւն Կարապետ եպիսկոպոսին (Առաջնորդ Ատրպատականի) և փիլիս. դր. Մկրտիչ քահ. Ղազարեանին (Պետերբուրգ):

№ 4. Մագիստրոս Նիկ. Ադոնցին (Պետերբուրգ) և բանասէր բժիշկ Միսակ Արամեանցին (այժմ հանգուցեալ):

№ 5. Պատմաբան պ. Ստեփան Լիսիցեանին (Թիֆլիս):

№ 6. Լեզուաբան պ. Ստեփան Մալխասեանին (Թիֆլ) թէև քննութեան համար ուղարկուած աշխատանքների յետ ստացման ժամանակամիջոց Յանձնաժողովս որոշել էր մինչև նոյն թնի փետրուարի 15, սակայն տարաբաղդաբար մինչև Ապրիլ ամիսը ստացուեց միմիայն պ. Ստ. Մալխասեանի քննադատութիւնը. այդ պատճառով Յանձնաժողովս ստիպուած եղաւ յայտարարել, որ մրցանակաբաշխութիւնը յետաձգուեմ է երկու ամսով: Սակայն այդ ժամանակամիջոցում ևս չըստացուելով քննադատութիւնները, Յանձնաժողովս հարկադրուեց 1909 թ. մրցանակաբաշխութիւն չկատարել և վերոյիշեալ բոլոր աշխատութիւնները թողնել հետեւեալ տարուայ մրցանակաբաշխութիւն համար:

1909 թ. ընթացքում ստացուեցին մրցութեան համար երկու նոր աշխատութիւններ.

№ 8 Զաքարէ և Իւսնէ Երկարաբաղուկների գործունէութիւնը. ձ ե ո ա գ ի ռ (32+116 էջ) աշխատութիւն պ. Ասլան Շահնաղարեանի.

№ 9. Սանահնի և Ղազախ գաւառի արձանագրութիւնները. ձ ե ո ա գ ի ռ (146 մեծադիր էջ) աշխատութիւն Սմբատ Տէր-Աւետիքեանի:

№ 8. Աշխատութիւնը տրուեց քննութեան համար պ. Ստեփան Լիսիցեանին, իսկ № 9 ուղարկուեց բանասէր պ. Քաջբերունուն (Գարրիէլ Յովհաննիսեանին):

№ 1 աշխատութեան առաջին քննութիւնը Յանձնաժողովի խորհրդածութեան ժամանակ անդամների մէջ երկու կարծիք առաջ բերելով «պատմութիւն հայ գաղթականութեան» մասին, Յանձնաժողովս ստիպուեց երկրորդ անգամ քննութեան ենթարկել այդ աշխատութիւնը:

1910 թ. Ապրիլի 3-ին կայացած նիստում՝ վարչութիւնս երկար խորհրդակցելուց, ներկայացրած աշ-

խառանքների բոլոր հանգամանքները կշռադատելուց և մասնագետների յատուկ քննադատութիւնները կարգալուց յետոյ՝ մրցանակի արժանի համարեց Ասլան Շահնաղարեանի «Ձ ա ք ա ր է և Խ ւ ա ն է Ե ր կ ա ր ա ղ ու կ ն ե ռ ի գ ո Ր ծ ու ն է ու թ իւ լ ն ը» և Սըմբատ Տէր-Աւետիքեանի «Ս ա ն ա հ ն ի և Ղ ա զ ա խ գ աւ ա ռ ի ա Ր ձ ն ա գ Ր ու թ իւ լ ն ն ե ռ ը» անտիպ աշխատութիւնները և որոշեց 500 ռուբլին բաժանելով երկու մասի՝ իւրաքանչիւրին յատկացնել 250 ռ. մըրցանակ, ի նկատի ունենալով որ այդ երկու աշխատութիւններն ևս համարեա նոյն շրջաններին ու նիւթերին են վերաբերում, երկուսը մի ամբողջութիւն են կազմում՝ լրացնելով միմեանց։

Անցեալ տարին նախնեաց ընտիր մատենագիրներէից՝ Ղազար Փարպեցու տպագրութիւնը վերջանալուց յետոյ՝ Յանձնաժողովս տպագրեց Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» գիրքը և 30 կոպ. գին նշանակեց։

Հայ չքաւոր օրիորդներին օժիտ տալու համար անցեալ տարիների ձևով՝ ներկայացրած վկայականներից կազմուեց հարիւր եօթանասուն և երկու (172) օրիորդների անուանացանկ. 1909 թ. ապրիլի 5-ին վիճակն ընկաւ հետևեալ երեք օրիորդներին. № 41, օր. Փարեմուզեան Քալինկա, № 63 օր. Աբրահամեան Սաթենիկ և № 164 օր. Կարապետեան Վարսենիկ։ 1910 թ. ապրիլի 4-ին նոյն ձևով կազմուած 163 օրիորդների անուանացանկից՝ վիճակն ընկաւ հետևեալներին № 61 օր. Յարութիւնեան Աննա, 152 Վեքիլեան Նունէ և № 157 օր. Մուրադեան Մարիամ։

1909 թ. ծխատէր քահանաների վկայութեամբ ներկայացած 58 չքաւորներին բաժանուած է երկու-երկու ռուբլի, ընդամենը 116 ռուբլի։ 1910 թ. համար

Հ Ա Շ Ո Ւ Ե Վ Շ Ի Ռ

Թիֆլիսի Վանաց աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն Յանձնաժողովի մուտքի և ծախքի 1908 թուի ապրիլ 5 ից մինչև 1910 ապրիլ 4 ը.

ՄՈՒՏՔ

1908 թուի ապրիլի 5 ին դրամարկղը ունէր

1. առևտրական բանկի տոմս № 48986	25,000 ռ.	
2. նոյնտեղ ընթացիկ հաշուով գրքոյկ № 3446	3,078 — 31	
3. նոյն բանկից տոկոս	653 — 12	
4. առ ձեռն դրամ	59 — 78	28,791 — 21 —

Առևտրական բանկից 25,000 ռուբլու տոկոսիք

1908 թ. ապրիլ 4 ից մինչև 1909 փետր. 3 ը 1,079 — 83 —

Նոյն տեղից ընթացիկ հաշուի տոկոս 1908 թուի 84 — 79 —

Նախորդ գանձապահ Արշակ Բաբեանից իր վրայ մնացած ապառիկը . . . 134 — 1 —

Քրքերի վաճառումից 186 — 88 —

Առևտրական բանկից 25,000 ռուբլու տոկոսիք 1909 փետր. 4 ից

մինչև 1910 ապրիլ 3 1518 — 88 —

Նոյն տեղից տոկոսիք ընթացիկ հաշուի 1909 թուի 89 — 30 —
31,884 — 90 —

Հեռագիր և փոստ	10 —
Դիւանական և մանր ծախք	25 — 91 —
Ղազար Փարպեցու սրբազրութ. մնացորդը և ցանկ կազմելու վարձ	99 —
Մոմագին հոգեհանգստեան	5 —
Աղբատներին բաժանուած 1908 ին	192 —
» » 1909 ին	116 —
Տեղեկագրի տպելու ծախք	56 —
» սրբազրութեան վարձ	13 — 50 —
Լրագիրներին յայտարարութիւնների վարձ	28 — 40 —
Մրցանակ երուանդ Լալայեանցին	300 —
Փոխարքայի յօբելեանի ծախք	15 —
Մանուկ Աբեղեանին մրցադրամ	200 —
օր. Եփեմիա Միրզախանեանին օժտադրամ	100 —
Եղիշէ և Ղազար Փարպեցի փառակազմ և լաթակազմ կազմելու վարձ	141 —
Ղազար Փարպեցու տպագրութեան մնացորդը	61 — 82 —
օր. Աստղիկ Աթաբեկեանցին օժտադրամ	100 —
օր. Հայկանոյշ Քարտաշեանցին օժտադրամ	100 —
Եր. Լալայեանցին մի ալբոմի գին	100 —
օր. Վարսենիկ Կարապետեանցին օժտադրամ	100 —
օր. Եղիսաբեդ Դովլաթբեկեանցին օժտադրամ	100 —
Կիրակոս Գանձակեցու տպագրութեան գին	288 — 80 —
» » թղթի գին	134 — 5 —
» » սրբազրութեան և ցանկ կազմելու վարձ	135 —
» » փառակազմ և լաթակազմ կազմելու վարձ	66 —
	2487 — 48 —

ԴՐԱՄԱՐԿՂԸ 1910 ապրիլ 4 ին

1. Տոմս Առևտրական բանկի № 55,809	25,000 ռ.
2. Նոյն բանկում ընթացիկ հաշուով գրքոյկ № 3446	4,161 ռ. 12 4.
3. Գանձապահի մօտ	236 — 30 — 29,397 — 42 — 31,884 — 90 —

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՇԻԻԸ

1906 մայիս 28 ից մինչև 1910 ապրիլի 3 ը.

1. ԵՂԻՇԷ

1906 մայիսի 28-ին կար		Նուէր է տուած		Վաճառուած են	
Գրավաճառների մօտ	500 օրինակ	12 օրինակ		Գրատետքերի գրավաճառանոցում	500 օրինակ
Պահեստում	536 »			Կենտրոնական	» 55 »
	1036 օրինակ			Պահեստում	» 25 » 580
1910 ապրիլի 3 ին մնում է անվաճառ գրավաճառանոցներում և պահեստում ընդամենը					444
					Նուէր . . . 12
					Ընդամենը 1036

2. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Ստացուած է տպարանից 1185 օրինակ,		Նուէր է տուած		Վաճառուած են	
որից տուած է գրավաճառանոցներին	300 օրինակ	32 օրինակ		Գրատետքերի գրավաճառանոցում	150 օրինակ
Պահեստում	885 »			Կենտրոնական	» 19 »
	1185 »			Պահեստում	» 15 » 184
1910 ապրիլի 3 ին մնում է անվաճառ գրավաճառանոցներում և պահեստում ընդամենը					969
					Նուէր . . . 32
					Ընդամենը 1185

3. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

Ստացուած է տպարանից 1185 օրինակ,		Նուէր է տուած	
որից տուած է գրավաճառանոցներին	250 օրինակ	10 օրինակ	
Պահեստում կայ	935		
	1185		
1910 ապրիլի 3 ին մնում է անվաճառ գրավաճառանոցներում և պահեստում ընդամենը 1175 օրինակ:			

նորն եղանակով կաղմուած անուանացանկի չքաւորնե-
րին պէտք է բաժանուի 200 ըուրլի:

Թանգարանի համար մինչև այժմ ձեռք հն քե-
րուել հետեւեալ իրերը.

Վ ա ն ք ի ա . ե կ ե ղ ե ց ու ց

Մի հին վարագոյր

Երկու սեղանի գոգնոց

Մի Յայմաւուրք գրչեայ

Մի Յայմաւուրք տպած

Երկու պղնձէ սրուակ մեռոնի:

Գ ն ու ա ծ ե ն

Մի ձեռագիր շարական.

Մի լուսանկար ալբոմ-հնութեանց.

ՔՆՆԱԴԱՏՆԵՐԻ ՈՒՂԱՐԿԱԾ

ԳՐԱԽՈՐ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

1. ԶԱՔԱՐԷ ԵՒ ԻՎԱՆԷ ԵՐԿԱՐԱԲԱԶՈՒԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ
ՆԷՈՒԹԻՒՆԸ (ԺԲ.—ԺԳ. ԴԱՐ.). ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ
ԱՍԼԱՆ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Ղուկասեանի մրցանակարաշխութեան ներկայացրած այս հետազոտութիւնն արդէն արժանացած է Ս. Պետերբուրգի համալսարանի արեւելեան լեզուների ֆակուլտետի կողմից ոսկէ մեդալի, համաձայն ուսուցչապետ պ. Ն. Մառի տուած զեկուցման: Երիտասարդ ուսումնասիրողը չի ուզեցել տալ ժԲ.—ԺԳ. դարի ամփոփ Հայոց պատմութիւնը, այլ աչքի առաջ է ունեցել աւելի մասնագիտական նպատակ, այն է՝ պատկերացնել այդ ժամանակամիջոցի երկու նշանաւոր հայ իշխանների, Զաքարէ և Իվանէ երկայնաբազուկ եղբայրների գործունէութիւնը: Իր հետազոտութիւնը պ. Ասլան Շահնազարեանը սկսում է մի ներածութեամբ, որի մէջ աշխատում է լուսարանել Վրաստանի և Հայաստանի քաղաքական վիճակը մինչև երկայնաբազուկների բարձրանալը: Այնուհետև նա Ա. գլխում պատմում է այն հանգամանքների մասին, որոնց շնորհիւ երկայնաբազուկները աջողում են առաջնակարգ տեղ բռնել վրաց թագաւորների պալատում և պետութեան մէջ. այստեղ մանրամասն քննում են այդ իշխանական տոհմի ծագման մասին մեզ հասած տեղեկութիւնները և պարզում է Սարգիս մեծի մասնակցութիւնը Գէորգ III թագաւորի դէմ կազմած դաւադրութեանը: Բ. գլուխը նուիրած է Թամար թագուհու գահակալութեան առաջին

տարիներին, մինչև Զաքարէի ամիր սպասարար և Ման-դատուրթախուցէսի նշանակելը: Յաջորդ Գ. գլխում հետզհետէ նկարագրւում են երկու եղբայրների բոլոր պատերազմական արշաւանքները մինչև Զաքարէի մահը. ապա Դ. գլուխը տալիս է Իվանէ Աթաբէկի զինւորական գործունէութեան պատկերը մինչև նրա մահը: Վերջին երկու գլուխները յատկապէս խօսում են Զաքարէ սպասարարի և Իվանէ Աթաբէկի ներքին գործունէութեան մասին, այն է՝ Ե-ում պարզաբանւում է երկայնաբազուկների արշաւանքների նշանակութիւնը և Մեծ Հայքի կուլտուրական վիճակը նրանց օրով, իսկ Զ-ում այդ ժամանակաշրջանի վրայ—հայկական յարաբերութիւնները:

Ինչպէս յայտնի է, մինչև այսօր մենք դեռ չունինք ոչ մի, ոչ հայերէն, ոչ էլ օտար լեզուով, յուրջ աշխատութիւն երկայնաբազուկների պատմական դերը լուսաբանող: Այն, ինչ որ նրանց մասին կրկնւում է մեր բոլոր պատմական գրութեանքների մէջ, հիմնւած է միմիայն հայկական աղբիւրների, գրեթէ բացառապէս Կիրակոս Գանձակեցու և Վարդան Պատմչի երկասիրութիւնների թողցրիկ ուսումնասիրութեան վրա: Մինչդեռ այդ դարի մասին շատ գնահատելի նիւթեր են պարունակւում և՛ բազմաթիւ արձանագրութիւնների, և՛ վրաց ու արաբացոց գրականութեանց, և՛ հայկական ձեռագիրների յիշատակարանների մէջ: Աչքի անցնել այդ առատ տեղեկութիւնների հարուստ շտեմարանը օրէցօր աւելի ու աւելի կարևոր է դառնում հայոց պատմագիտութեան մէջ, մանաւանդ որ այդ շրջանի քաղաքական և կուլտուրական երևոյթների լուսաբանութեան հետ սերտ կապւած են հայոց և նոյն իսկ վրաց անցեալի մի քանի առաջնակարգ և էական հարցերը: Հայոց աւատական կազմակերպութեան առանձնայատկութիւնները, կալա-

ծատիրութեան ձևերը, առևտրական դասակարգի առաջնալը և խաղացած դերը, խաչակրաց արշաւանքների աղբեցութիւնը՝ թէ քաղաքական հասկացողութիւնների ու կրօնական-բարոյական հայեացքների և թէ դասական գեղերի յարաբերութեանց վրայ—վերջապէս հայկական աշխարհի վերաբերմունքը գէպի վրացականը, մի կողմից, և գէպի մահմեդականը միւս կողմից,—սրանք և՛ սրանց նման ընդհանուր բազմաթիւ հարցերի բազմակողմանի և իրական լուսաբանութիւնը շողկապւած է Զաքարէ և Իվանէ երկայնաբազուկների գործունէութեան գնահատան կողմերի ուսումնասիրութեան հետ: Զարմանալի չէ, որ Երկայնաբազուկ եղբայրների ժամանակամիջոցի պատմական երևոյթների հետազոտութիւնը հերթական կարևորութիւն է ստացել:

Արդէն պրոֆ. Ն. Մառը իր գեղուցման մէջ (տես. отчеты Императорскаго С. Петербургскаго Университета за 1908 годъ, стр. 73—77.) քննելով պ. Ա. Շահնազարեանի ներկայ աշխատութիւնը, իրաւացի մատնացոյց է արել, որ հեղինակի ընդհանուր պատմական աշխարհայեցողութիւնը չի կարողացել ազատւել այն աւանդական տեսակէտներից, որ մեր պատմաբանները իւրացրել են հայ հոգևորական մատենագիրներից և վրացիներից: Հետազոտողը շատ մեծ նշանակութիւն է տալիս առանձին թագաւորական տների հաստատւելուն, ինչպէս որ խիստ շեշտակի կերպով առաջնակարգ տեղ է յատկացնում առանձին անհատների գործունէութեան: Կամենալով բացատրել վրաց գէնքի աջողութիւնները Մեծ հայքում ժԲ—ԺԳ. դարում, նա, բացի կրօնական պատճառից, այն է, որ վրացիները, որպէս քրիստոնեաներ, պաշտպան էին հանդիսանում հայկական քրիստոնեայ տարրին և զրա համար էլ վերջինիս համակրութիւնը վայելում,—չի կարողանում

գտնել այլ, աւելի զօրեղ հանգամանքներ հասարակական-դասակարգային և մասնաւորապէս տնտեսական ուշալ յարաբերութիւնների մէջ, չը նայելով որ իր աշխատութեան մէջ մի ամբողջ գլուխ է (2) նւիրում այն իրողութիւնը հաստատելու, թէ հայոց և վրաց կրօնական յարաբերութիւնները այդ շրջանում շատ անգամ եղել են գրեթէ թշնամական: Կամենալով բացատրել թամար թագուհու և Գէորգ Լաշայի ժամանակաշրջանի հատկապէս միջոց շեշտում է (եր. 29, 47, 49, 68), որ «բացի արտաքին հանգամանքներից, հեշտ հարստանալու տենչն էլ ստիպում էր այն ժամանակաշրջանի իշխաններին կամ թագաւորութեանց ղեկի ղեկավարներին»: Առհասարակ ամբողջ հետազոտութեան մէջ չեն երևում այն կենսական պարագաները, որոնք նպաստեցին Վրաստանի բարձրանալուն ժ.թ. դարի վերջերում և ժ.թ. սկզբներում և վրաց պետական իշխանութեան տարածւելուն հայաբնակ երկիրներում, ինչպէս և այն պարագաները, որոնք այնուհետև թոյլ չը տւին Վրաստանին բաւականաչափ դիմադրական ուժ դնել Ջալալ-էդ-դինի և ապա թաթարների արշաւանքների դէմ (տես. երես 81), մինչդեռ հէնց այդ կենսական պարագաների լուսաբանութիւնն է, որ պիտի հասկանալի դարձնէր Երկայնաբազուկ եղբայրների գործունէութեան պատմական իմաստը:

Բայց չը նայելով այս ընդհանուր թերութեանը, որ անշուշտ պէտք է բացատրել աշխատասիրողի երկտառարդութեամբ, անկարելի է դրժել: որ ամբողջ հետազոտութիւնը այնպէս աշոյ է քննում, մասնաւորապէս Ջաքարէ սպասալարի և Իվանէ Աթաբեկի կեանքի առանձին գէպերը, որ մնում է միայն ողջունել այս շարադրութիւնը, որպէս առաջին փորձ գիտնական

նախապատրաստութեամբ՝ շօշափւած խնդրին մօտենալու: Պ. Ա. Շահնազարեանը օգտուել է մեր հին մատենագիրներից, անչափ աշխատել է ս. էջմիածնի մատենադարանում և այնտեղի ձեռագիրների յիշատակարաններից հանել իրեն հետաքրքրող հարցերին վերաբերեալ նիւթերը, հաւաքել է մինչև այսօր հրատարակուած արձանագրութիւնները, օգտուել է վրացական աղբիւրներից, մասամբ արաբականներից ևս, և աչքի առաջ է ունեցել բոլոր այն աշխատասիրութիւնները, որ մինչև այսօր լոյս են տեսել նոյն խնդրի մասին: Լաւ տիրապետելով հին հայերէսին և վրացերէսին, նա կարողանում է երբեմն շատ ճիշտ դիտողութիւններ անել, և նրա ամբողջ հետազոտութիւնը մի շարք մանրակրկիտ քննութիւններ է ներկայացնում, որոնք սրբագրում կամ բոլորովին նոր կերպով են պատկերացնում Ջաքարէի և Իվանէի գործունէութեան այլ և այլ մանրամասնութիւնները: Առանձին ուշադրութեամբ ուսումնասիրում են ժամանակագրական հարցերը, արշաւանքների ուղղութիւնները, գրաւած երկիրների սահմանները և այլն: Մինչև այժմ դեռ ոչ ոք չէ օգտուել այդ հարցերին վերաբերեալ նիւթերից այնչափ լայն կերպով, ինչպէս ներկայ աշխատութիւնը: Մանաւանդ գնահատելի են վրաց աղբիւրներից հանած կտորները, թէև այս գէպում նա ձեռքի տակ է ունեցել զխաւորապէս յատուկ լոկալիտիւտիւն և, ինչպէս մատնանշում է պրօֆ. Ն. Մառը, չի դիմում վրացական այլ աղբիւրների:

Շատ ափսոս, որ պ. Ա. Շահնազարեանը չի կարողացել ստուգել հրատարակուած արձանագրութիւնները, թէև ինքը վկայում է որ դրանց ընդօրինակողները մեծ մասամբ եղել են ոչ թէ մասնագէտ անձնաւորութիւններ, այլ քիչ նախապատրաստուած հնասէրներ: Անշուշտ այդ արձանագրութիւնների աւելի ճիշտ ընթերցումը

ապագայում պիտի հարկադրի մի քանի սրբագրություններ մտցնելու այս հետազոտությունն մէջ:

Այն մասնաւոր խնդիրներէ, որ առանձնապէս մանրազնին ուսումնասիրութեան են արժանացել այս աշխատութեան մէջ, կարող ենք բերել նախ Երկայնաբազուկների ծագման հարցը, թէ՛ն մեզ թւում է հեղինակը շատ մեծ նշանակութիւն է տալիս Կիրակոս Գանձակեցու և Վարդան պատմչի վկայութիւններին՝ թէ՛ երկայնաբազուկները ծագում են քրդական ազգից, և համեմատաբար քիչ ուշադրութիւն է դարձնում արձանագրութեան «յազգէ Բագրատունեաց» (եր. 43) և ձեռագիր յիշատակարանի «Թագաւորացն» (եր. 76) խօսքերին *):

Շատ աշոյ կերպով պ. Ա. Շահնազարեանը լուծել է Երկայնաբազուկների ճիշդագրութեան մոլթ խնդիրը: Չի շօշափած Կայանի տէր Համազասպեանների և Երկայնաբազուկների (որոնց պ. Շահնազարեանը միշտ անւանում է «Երկարաբազուկներ») մէջ եղած ազգակցութեան հարցը: Հետազոտողը մի առ մի, ժամանակագրական կարգով մանրամասնօրէն շարահիւսում է երկու եղբայրների պատերազմական բոլոր ձեռնարկութիւնները, այդպիսով վերականգնելով պատմական դէպքերի արտաքին յաջորդականութիւնը: Դա մի կարևոր աշխատանք է, որից յետոյ միայն կարելի է աւելի խորը թափանցել ժամանակի ներքին հանգամանքների ոգու և ընթացքի մէջ: Առանձին աշարջութեամբ քննուում են Զաքարէ ամիր սպասալարի և Իվանէ Աթաբէկի մահուան տարեթիւերը: Այդ մասն ու-

*) Եր. 13. Սմբատ Թագաւորը անւանում է Կիւրիկէ 11 քեռի, մինչդեռ եղել է նրա եղբայրը, ինչպէս երևում է նրանց քոյր Հրանուշի արձանագրութիւնից (Սանահնի նշխարատան տ. Ս. Հ. Զալալեանի ճանապ. հ. 1):



սումնասիրութիւնների վերաբերյալ ինքնուրույն աշխատանք վրաց Թագաւորութեան արքայի որդի Կոնստանտին Գործիչների ամբողջական նկարագիրները, կենդանի պատկերները, երկու եղբայրների բնավորութեանց և աշխարհայեցողութեանց առանձնայատկութիւնները, այդ տեսակէտից գրեւծքը չի տալիս լիակատար բաւարարութիւն, մինչդեռ անձնական առանձնայատկութիւնները անշուշտ որոշ չափով դեր են խաղացել, օրինակ, թէ՛ կուզ Սլաթի պաշարման գործում կամ Զալալ-էդ-դինի դէմ Գառնիի մօտ մղած կռուի մէջ: Բացատրել վերջին պարտութիւնը նրանով, որ «Իվանէն մոռացութեան էր տուել զինուորական հմտութիւնը» (եր. 96) հազիւ թէ կարելի է:

Ինչպէս ասացինք, հետազոտութեան վերջում նկարագրուած են Մեծ Հայքի ներքին կեանքի մի քանի երևոյթներ, թէ՛ն շատ թուուցիկ կերպով: Այդպէս, օրինակ, միայն մի ակնարկ է բերւած Կարսի բնակիչների անբաւականութեան մասին, որի պատճառ եղել են իշխանները (տես. երես 55) և որի շնորհիւ կարսեցիները մահմեդական տիրապետութիւնը գերադասում էին քրիստոնէականից: Այդ հանգամանքը պիտի ստիպէր աւելի լուսաբանելու այդ դժգոհութեան շարժառիթները, որոնք անկասկած ահագին դեր են խաղացել այն ժամանակուայ քաղաքական կեանքի հոսանքի մէջ: Ե. գրւած բերուած՝ Մեծ Հայքի ներքին վիճակի պատկերը առհասարակ շատ կցկտուր է, իսկ այնպիսի բնդհանուր եզրափակութիւնները, թէ «ճորտութիւնը Հայաստանում չի թողել խոր արմատներ և իբրև առանձին ինստիտուտ գոյութիւն չի ունեցել», թէ «ճորտեր ունենալու սովորութիւնը ժամանակաւորապէս մուտք է գործել Հայաստան Վրաստանից» (114,—115 եր.) և թէ առհասարակ «Ֆէօդալական կազմը օտար է եղել հայոց

վանքերի ոգուն», դեռ վաղաժամ են. ընդհակառակը՝ օրէցօր աւելացող պատմական տեղեկութիւնները առիթ են տալիս աւելի շուտով բոլորովին հակառակ եզրափակութիւններին գալու:

Այս ուսումնասիրութեան սկզբնական օրինակը, որ ներկայացուել է Ս. Պետերբուրգի Արևելեան լեզուների ֆակուլտետին, եղել է ուսերէն և այժմ միայն թարգմանուել է հայերէն: Տեղ տեղ թարգմանութեան լեզուի մէջ նկատուում են սկզբնական օրինակի լեզուի ազդեցութեան հետքեր, օրինակ. «ապագայ (փոխ. յաջորդ) դարերում» (եր. 24.), «գործնական (փոխ. «ներգործական») դեր է խաղում» (եր. 27), «տաք ճակատամարտ» (жаркій бой, 32 եր.) «մինգրելցիներ» և «իմերէթցիներ» (мингрельцы, имеретинцы եր. 53), «ճանապարհուում է դէպի արշաւանք» (выступает въ походъ 69. եր.) այլն: Ցանկալի է որ եթէ այս աշխատասիրութիւնը տպագրութեան յանձնի, լեզուն սրբագրուի:

Զը նայելով վերև յիշուած և այլ մի քանի թերութիւններին, պ. Ա. Շահնազարեանի հետազոտութիւնը անկասկած ունի այնքան առաւելութիւններ, որ կարելի է մրցանակաբաշխութեան յանձնարարելի համարել:

Ստ. Հիւրիցեան

1910 թ.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԱԼԵԱՆ
ԲԱԺՆԻ ԿԱՐԾԻՔԸ ԱՍԼԱՆ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԻ ԱՇԽԱ-
ՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

На тему по армяно-грузинской филологии „Дѣятельность Иванэ и Захаріи Долгорукихъ по свѣдѣніямъ историковъ и по армянскимъ и грузинскимъ надписямъ“ поступили три работы.

Сочиненіе № 10 подъ девизомъ „Ани“ представляет собою обстоятельную монографію въ IV+248 страницъ рукописи in-4⁰ Очень жаль, что въ ней имѣется вводная часть (стр.1—10) „Положеніе Грузіи и Арменіи до появленія Захаріи и Иванэ“. Она лишь подчеркиваетъ неслучайность всплывающихъ кое-гдѣ въ самомъ изслѣдованіи общихъ сужденій и вмѣстѣ съ ними обнаруживаетъ неполный разрывъ автора съ устарѣвшими взглядами какъ вообще на исторію, такъ въ частности на давно минувшую дѣйствительность Закавказья. При всемъ стараніи работать въ духѣ новой филологии, авторъ въ общихъ сужденіяхъ (это особенно замѣтно въ Введеніи) остается вѣренъ старому традиціонному дѣленію исторической жизни Грузіи и Арменіи и на малообоснованные періоды. Въ пониманіи мѣстной жизни авторъ придерживается идеологии древнихъ армянскихъ историковъ, исключительно монашествующихъ христіанъ и грузинскихъ описцевъ XII-го вѣка. Въ защитѣ

христіанъ и прославленіи христіанскаго имени онъ видитъ смыслъ и источникъ процвѣтанія грузинскаго государства, въ составъ котораго входили довольно обширныя области съ мусульманскимъ населеніемъ. Установленіе прочнаго мирнаго сожительства грузинъ и армянъ въ грузинскомъ царствѣ объясняется государственнымъ романтизмомъ, именно тѣмъ, что грузинскіе цари стремились-моль защищать отъ мусульманъ угнетенныхъ христіанъ-армянъ, а армяне сѣбѣ платили имъ, своимъ бдагодѣтелямъ, безграничною преданностью. Между тѣмъ армяно-грузинскія отношенія въ XII—XIII вѣкахъ представляютъ коренной интересъ для темы: на почвѣ реального ихъ освѣщенія только и могла быть сдѣлана правильная общая оцѣнка дѣятельности армянскихъ князей Захаріи и Иванѣ въ грузинскомъ государствѣ. Вообще представленіе автора объ историческомъ процессѣ—чисто внѣшнее. Творческая роль отдѣльныхъ личностей преувеличена. Разъ отъ вниманія автора ускользаютъ дѣйствительные факторы прошлой жизни Грузіи и Арменіи, построеніе его не можетъ представить и не представляетъ самостоятельнаго интереса. Онъ имѣетъ лишь формальное значеніе, служа средствомъ для болѣе или менѣе нагляднаго изложенія собранныхъ авторомъ свѣдѣній и устанавливаемыхъ имъ датъ фактовъ. Съ этими данными авторъ задумалъ написать цѣльную картину всей дѣятельности братьевъ Долгорукихъ на фонѣ попутно изображаемой исторической жизни Грузіи и Арменіи. Соотвѣтственно сочиненіе разбито на пять главъ: первая глава посвящена исторіи рода Захаріи и Иванѣ Долгорукихъ до смерти грузинскаго царя Ге-

оргія III (стр. 11—38); во второй главѣ излагается исторія царствованія Тамары и прослѣживается ростъ значенія братьевъ Долгорукихъ при ея дворѣ до назначенія Захаріи министромъ внутреннихъ дѣлъ (стр. 39—68); дѣятельность обоихъ братьевъ съ назначенія Захаріи главно-командующимъ до его смерти составляетъ содержаніе третьей главы (стр. 69—125); четвертая глава посвящена исключительно дѣятельности Иванѣ послѣ смерти его брата (стр. 125—163); въ пятой главѣ раскрывается значеніе походовъ Захаріи и Иванѣ и характеризуется культурное возрожденіе и гражданское устройство Великой Арменіи при нихъ (стр. 164—247). Въ послѣдней главѣ въ числѣ внутреннихъ вопросовъ обстоятельно разсмотрѣнъ „церковный“, подробно изложена исторія взаимоотношеній грузинской и армянской церкви и выясняется роль Долгорукихъ въ нихъ (стр. 206 сл.). Авторъ и здѣсь остался вѣренъ традиціонному армянскому освѣщенію, не использовалъ и даже не указалъ на возможность использованія въ этомъ вопросѣ грузинскихъ источниковъ, по которымъ халкедонитское православіе и въ это позднее время распространено было въ массахъ армянскаго населенія, слѣдовательно, было общественное явленіе среди армянъ, а не частный капризъ отдѣльныхъ вліятельныхъ ренегатовъ. Въ связи съ этимъ преувеличенная оцѣнка роли личности въ исторіи ярче всего выступаетъ у автора въ одномъ изъ основныхъ положеній работы, именно въ IV-мъ (стр. 247—248), по которому „причиною процвѣтанія монастырской жизни и духовной литературы армянъ“ признаются полквоодцы Захарія и Иванѣ!

Но и въ отношеніи изложенія фактической стороны дѣла авторъ напрасно раздвинулъ такъ широко рамки темы, не располагая полнотою матеріаловъ. Освѣдомленность его въ грузинскихъ и армянскихъ источниковъ слабая: арабскими вообще мусульманскими свѣдѣніями онъ еще пользуется, хотя и изъ вторыхъ рукъ, но западные источники почти совершенно упущены имъ, даже тѣ, которые уже использованы грузиновѣдами, такъ въ вопросѣ о значеніи грузинъ въ Іерусалимѣ (стр. 108).

Въ то же самое время авторъ высказываетъ себя безукоризненнымъ самостоятельнымъ изслѣдователемъ фактической обстановки отдѣльных специальныхъ вопросовъ для которыхъ достаточно изученія мѣстныхъ матеріаловъ. Работа свидѣлствуетъ объ основательномъ его знакомствѣ съ источниками на грузинскомъ и особенно армянскомъ языкахъ. Не довольствуясь изданными текстами, авторъ ѣздилъ въ Эчмиадзинъ, гдѣ изъ рукописей бібліотеки армянскаго первопрестольнаго монастыря, пользуясь указапіями ея хранителя о. Месропа, привлекъ немало данныхъ, особенно рядъ цѣнныхъ датъ. (стр. 38, 47, 61, 124, 125, 148 et pass.). Авторъ по каждому вопросу доискивается точныхъ указаній и предлагаетъ соответственныя критически проверенныя свѣдѣнія, напр. по вопросамъ о происхожденіи рода князей Захаріи и Иванѣ (стр. 14—24), о родословіи ихъ (стр. 25—29), объ исторіи ихъ предковъ (стр. 29 сл.) и т. п. Съ разностороннею пытливостью чутко отмѣчаетъ всякаго рода свѣдѣнія источниковъ, характеризующія эпоху, въ какомъ бы то ни было отношеніи, такъ напр. использованы рѣдкія обмолвки въ надписяхъ

и у историковъ о крѣпостничествѣ у армянъ (стр. 88—189), о правѣ собственности монастырей (стр. 195), о смѣшанномъ судѣ съ участіемъ мусульманскихъ кадіевъ по одной чисто христіанской тяжбѣ (стр. 197—202) и т. п. Въ критикѣ авторъ сдержанъ: при противорѣчіи показаній или при порчѣ текстовъ, онъ ограничивается констатированіемъ существующаго положенія вещей въ источникахъ, не пускаясь въ рискованныя текстуальныя или иные конъектуры. Трезвый взглядъ и спокойный тонъ не измѣняютъ ему и въ національныхъ и религіозныхъ вопросахъ: безпристрастіе его выше всякихъ похвалъ. Литература предмета использована тщательно. Въ поправкахъ, болѣею частью основательныхъ, къ существующимъ мнѣніямъ авторъ углубляется до источниковъ и въ нихъ открываетъ ошибочныя свѣдѣнія, какъ на примѣръ то, что древне-армянскіе историки все придерживаются ошибочной генеалогіи Долгорукихъ, обличаемой показаніями лучше освѣдомленныхъ надписей. Въ двухъ, трехъ случаяхъ допущены ошибки въ переводахъ даже съ армянскаго, автору, по всей видимости, лучше извѣстнаго, такъ на примѣръ «саһ манахач» межевой крестъ и «томаргер» загоны и луга приняты за географическія названія и въ русскомъ текстѣ оставлены безъ перевода, но тѣмъ не менѣе многочисленные переводы, съ обоихъ языковъ, и съ армянскаго, и съ грузинскаго, сдѣланы превосходно, каждый разъ по самостоятельному установленію текста по всемъ изданіямъ, часто съ исправленіемъ существующихъ переводовъ.

Внѣшніе филологическіе приемы авторомъ усвоены въ совершенствѣ: транскрипція восточныхъ именъ

трого выдержана, ссылки и цитаты обстоятельны и точны, переводы предложены въ видѣ, дающемъ наглядное представленье о подлинныхъ чтеніяхъ грузинскихъ и армянскихъ текстовъ и малѣйшихъ отступленіяхъ переводчика, вызывавшихъ стилистическими соображеніями.

Въ итогѣ, несмотря на всѣ присущіе изслѣдованію недочеты, общіе или частные, несмотря также на то, что авторъ все время борется и не всегда успѣшно съ трудностями русской рѣчи, работа читается съ пользою для себя даже спеціалистомъ, и ее можно признать прекраснымъ отвѣтомъ на заданную тему.

На основаніи этого отзыва, факультетъ Восточныхъ языковъ призналъ сочиненіе № 10, съ девизомъ «Ани», заслуживающимъ награжденія золотой медалью.

Авторомъ этого сочиненія оказался студентъ Факультета Восточныхъ языковъ Асланъ Шахназарианцъ.

2. ՍԱՆԱՀՆԻ ԵՒ ՂԱԶԱԽ ԳԱԽԱՌԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՒԱՔԵՅ ԵՒ ՃՇՏԵՅ ՍՄԲԱՏ ՏԷՐ ԱԿԵՏԻՍԵԱՆ 1903—1908 թ.

Հեղինակը իւր աշխատութիւնը բաժանել է 3 մասերի՝ Յառաջարան, Սանահնի արձանագրութիւնները և Ղազախ գաւառի արձանագրութիւնները: Յառաջարանի մէջ ցոյց տալով նախկին հեղինակների սխալները Սանահնի ուսումնասիրութեան գործում, բացատրում է որ ճանապարհորդները (Սարգիս Կալիս. Ջալալեան և Ղըրիմեցի Յոհաննէս Կալիս.) արտագրել են վանքի արձանագրութիւնների միայն մի մասը, այն էլ տարեգրութիւն բովանդակողները, այն ինչ, հեղինակի ասելով, ուշադրութեան չեն առնուած այն արձանագրութիւնները, որոնք յետոյ են անում մեր առաջ հայոց ներքին կեանքի, սովորութիւնների, նոցա կրօնասիրութեան այդ անցած դնացած օրերի վարագոյրի մի ծայրը»: (էջ 4.)

Այդ մեծ պակասութիւնը, մանաւանդ արձանագրութիւնների օրէցօր անյայտանալն նկատի առնելով՝ հեղինակը ձեռնարկել է հաւաքել 1903 թուին Ղազախի շատ վանքերից միայն մի քանիսի արձանագրութիւնները և ընդօրինակել է 1908 թուին Սանահնի արձանագրութիւնները լրիւ: Ուրեմն աշխատասիրողի այս անգամ միակ նպատակն է եղել ճշտել տպագրուած արձանագրութիւնները և ճշտութեամբ ժողովել դեռ ևս անյայտ մնացածները, որպէս զի նիւթ պատրաստի լիա-

կատար պատմութեան (Սանահնի) համար, որի կազմումը խոստանում է պ. Տէր Աւետիքեանը:

Այնուհետև նկատելի է որ աշխատասիրողը իւր վերնագրի մէջ գրել է «Ղազարի գաւառի» արձանագրութիւնները, այն ինչ՝ սակաւ յառաջ գնալով՝ մենք տեսնում ենք որ նա ժողովել է այդ գաւառի միայն 5 վանքերի արձանագրութիւնները—Մշկավանք, Գաղայ սուրբ Սարգիս, Խորանաշատ, Կապտավանք և Վարագայ սուրբ Նշան, և բոլորովին բաց է թողնուած Տուեղ, Հաղարծին, Մակարավանք, Գօշավանք, Կիրանց, Ծովիզ, Սրուէղ և ուրիշները:

Թէ այսպէս և թէ այնպէս՝ աշխատասիրողը արտադրել է և կէս մասով ընդօրինակել է ընդ ամէնը 190 հատ արձանագրութիւն: Տալով մեզ Ղազարի գաւառի 5 վանքերի արձանագրութիւնների լոկ պատճէնը, առանց որ և է ծանօթութեան. նա—հեղինակը առանձին իմն կերպով կանգնում է Սանահնի արձանագրութիւնների վերայ, և ոչ միայն ընդօրինակում է մամուլի մէջ յայտնի և անյայտ արձանագրութիւնները 97 հատ, այլ և անում է նորանցից տեսակ տեսակ և համառօտ եզրակացութիւններ՝ պատմական, լեզուական և այլն:

Սակայն դուք չէք գտնիլ այդ աշխատութեան մէջ ոչ մի տեղեկութիւն յիշատակած եկեղեցիների ներկայ դրութեան կամ քայքայման աստիճանի մասին, նորանց չափերի, բարձրութեան, ոճի, ներքին մասերի դասաւորութեան այսինքն խորանների, բեմերի, աւազանների մասին, շինութեան քարերի տեսակների մասին, հեռու թէ մերձակայ քարահանքների մասին, վանքերի տեղադրութեան ու աշխարհազրահան դիրքի մասին, ճանապարհների դիրքութեան կամ դժուարութեան մասին, բնակչութեան հեռաւորութեան կամ մերձաւորութեան կամ

խաղառ բացակայութեան, ուխտագնացութեան և շրջաբաշխման մասին և այլն. և այլն:

Այլ և չկայ տեղեկութիւն թէ արձանագրութեանց հիման վերայ այս կամ այն վանքը ի՞նչ տեսակ և ռոքան հարստութիւն են ունեցել. ռւբ են և ինչ անունով են կոնչուում այժմ այն տեղերը, վարելահողերը, խոտհարքները, արօտատեղերը, գիւղերը և այլն ռւմ սեփականութիւնն են նորանք այժմ՝ վանքի, մասնաւոր մարդկանց թէ զանձարանի,

Այսպիսի կարեւոր տեղեկութիւնների յայտնագործումն ևս առաւել հարկաւոր էր Սանահնի մասին, ըստ որում այդ վանքն առանձին ուսումնասիրութեան նիւթ է եղել աշխատասիրողի համար:

Յիշատակած տեղեկութիւնների բացակայութիւնը, վստահանում եմ ենթադրել, գուցէ բացադրւում է նորանով, որ աշխատասիրողը «առաջուց պէտք է համարում յայտնել, որ իւր նպատակը չէ տալ Սանահնի պատմութիւնը, այդ ապագայի գործ է» (էջ 4): Նա աշխատել է տալ այդ վանքի «արձանագրութիւնների հարազատ ընդ օրինակումը և շոշափել նորա հետ կապուած մի քանի պատմական և լեզուական և այլ խնդիրներ»:

Այս կարճառօտ տեսութիւնից պարզ երևում է, որ աշխատասիրողը կենդրոնացած է բացառապէս յիշեալ 190 արձանագրութիւնների վերայ և՛ հետեւաբար՝ հէնց այդ կետից էլ պէտք է մօտենալ այդ աշխատութեան արժէքի աստիճանը որոշելու նպատակին: Ի բաց առնելով Ղազարի 5 վանքերի արձանագրութիւնները, որ լոկ արտագրութիւն է թէ և մեծ դժուարութեամբ, պ. Տէր-Աւետիքեանը մեծ հմտութեամբ և աշխատասիրութեամբ կարողացել է ընդ օրինակել Սանահնի բոլոր արձանագրութիւնները, որպէս զի այլ ու-

սուսնասիրողները գտնեն արձանագրութիւնների հա-
րազատ պատկերը իրենց հնագրական ձեւերով, միացում-
ներով, պատիւներով, կրճատումներով, ընդօրինակել է
իւրաքանչիւր տողն առանձին, աշխատելով ամէն կերպ
նմանիլ բնագրին ներքին բովանդակութեամբ և ար-
տաքին, ձեւերով, աշխատել է որոշել արձանագրութիւն-
ների տեղը և քարերի թիւը, որոնք կրում են այդ ար-
ձանագրութիւնները: Այդ բաւական չէ, ձեռքով ընդ-
օրինակածներին պ. Տէր Աւետիսեանը իւր ասելով, կցել
է և նրանց լուսանկարը, որով չափազանց դիւրացնում է
նորանց ընթերցումը: Ահա այն արժէքը, որ աչքի է
զարնում հեղինակի աշխատութիւնը:

Հէշտ չէ Տէր Աւետիսեանի կատարած գործը: Ով
երբեից է փորձել փորձել ժողովել աչքերով և ձեռքերով
հայոց վանքերի հին արձանագրութիւնները, նա կհաս-
կանայ թէ ի՞նչ դժոխային չարչարանք է կրում սիրա-
հար խուզարկուն արձանագրութիւններ լոկ յայտնա-
գործելու և ոչ ընդօրինակելու. Հապա ի՞նչ դժուարու-
թիւններ են յառաջ գալիս՝ երբ արձանագրութիւնները
պարզ չեն, փակագիր են, մաշուած են, մամռածածկ են,
խճճուած են օտար գծերով, բարձր, դժուարամատչելի
կամ մութը տեղ են և այլն: Մեծ համբերութիւն և
տոկունութիւն է հարկաւոր այդ հոգէմաշ գործը զլուխ
բերելու:

Ուրեմն՝ աչքի առաջ ունենալով մի կողմից ար-
ձանագրութիւնների կարևորութիւնը պատմութեան հա-
մար, միւս կողմից նորանց ժողովելու և մանաւանդ
ընդօրինակելու դժուարութիւններն ու ժամանակի կո-
րուստը, և երբորդ կողմից պ. Տէր Աւետիսեանի լրա-
ցրած գործի արժէքը, ես վստահանում եմ յայտնել որ
այդ գործը ըստ ամենայնի արժանի է մրցանակի:

Սակայն ըստ արդարութեան խղճի՝ չեմ կարող չը-
խոստովանել, որ պ. Տէր Աւետիսեանի կատարած գործը

մի ամբողջութիւն չէ, նա չէ կազմում Սանահնի վանքի
ամէն կողմից մշակուած իրականաբար պատմութիւնը, այլ
կազմում է այդ ապագայ պատմութեան նիւթերից մինը:
Ուստի չէ կարող գրաւել մրցանակի ամբողջ քանակը:

Վերջաբանում թոյլ եմ տալի ինձ ասել որ մեզա-
նում մրցանակներից իւրաքանչիւրը մի ամբողջութիւն
կազմելով չէ բաժանուած կարգերի, այն է առաջին
կարգի, երկրորդ կարգի և այլն: Դորա համար էլ մնա-
յուն յանձնաժողովները ստիպուած են լինում ինքեանք
բաժանել մրցանակի գումարը և վարձատրել նորան-
ցով միանուագ մի քանի մանր աշխատութիւններ: Այդ
մասնատումն, իմ կարծիքով, գործին վնասում է նո-
բանով, որ յետ մղելով ոմանց հեղինակների ծանրա-
կշիռ աշխատութիւններ պատրաստելու ձգտումից, ճա-
նապարհ է հարթում աւելի թեթեւ աշխատութիւնների
համար:

Գաբրիէլ Յոհաննիսեանց-Քաջքերունի

3. ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ. Ի ՍԱՐԱՓԵԱՆ
ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՔ. ԳՐԵՑ Հ. Ծ.
Վ. ԳԱԼԷՄՔԱՐԵԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ. ՎԻԵՆՆԱ,
1908.

Սարգիս արք. Սարաֆեանը 18-րդ դարու հայ նը-
շանաւոր եկեղեցականներիցն է, մինն այն դէմքերից,
որոնց կեանքը արտացոլում է նոր դարու մեր մտաւոր
շարժման բնորոշ կողմերը և հէնց այս տեսակէտից կա-
րեւոր էջ է պատմութեան:

Սարաֆեանի կենսագրութիւնը գրուած է նրա ձեռ-
նասուն աշակերտի Յովհ. Նուրտինեան վարդապետի ձեռ-
քով 1779 թ. նրա մահից չորս տարի յետոյ: Իսկական ձե-
ռագիրը գտնուում է Անտոնեան միաբանութեան դիւա-
նում: Նուրտինեանի երկը յանգաւոր գրուածք է, բա-
ժանուած 10 գլուխների, կամ ինչպէս հեղինակն է անուա-
նում, երգերի: Վերջին՝ 11 երգը նուիրուած է հեղի-
նակի կենսագրութեան: Ահա այս ձեռագիր յիշատակա-
րանն է, որ լոյս է տեսնում առաջին անգամ հ. Գա-
լէմքարեանի ջանքով և բռնում է 1—140 էջ: Հրատա-
րակութեան կցած է մի ընդարձակ հետազոտութիւն, ուր
հիմն ունենալով Սարաֆեանի կեանքը, հ. Գալէմքա-

րեանը շօշափում է և նրա ժամանակակից միւս հայ
կաթողիկ եկեղեցականների գործունէութիւնը: Հետեւու-
թեամբ Նուրտինեանի հ. Գ. ևս իր աշխատութիւնը բա-
ժանում է 10 գլուխների, ուր բերում է բնագրի հա-
մապատասխան բաժանմունքների բովանդակութիւնը,
ընդլայնելով կամ աւելի պարզելով Նուրտինեանի տե-
ղեկութիւնները նորանոր աղբիւրների հիման վերայ:
Պատմուածքը յաճախակի ընդմիջւում է կողմնակի ան-
ձանց կենսագրութեամբ, որ շատ անգամ ոչինչ առն-
չութիւն չունի բուն գործի հետ, կամ այնքան կապ ու-
նի, որքան որ խնդիրը վերաբերում է կաթողիկութեան:
Այս կարգի ընդմիջումները փաստում են պատմութեան
կանոնաւոր և ամփոփ ընթացքին և դժուարացնում ըն-
թերցանութիւնը, որ զգալի թերութիւն է: Հեղինակը
հաւատացնում է, որ դիտմամբ է այսպէս վարուել, նը-
պատակ ունենալով ներկայացնել միեւնոյն ժամանակ
հայ կաթողիկ հասարակութեան սկզբնաւորումն և կազ-
մակերպութիւնը: Հարկաւ, նոյն նպատակին կարելի էր
հասնել և գետեղելով բուն խնդրին—Սարաֆեանի կեան-
քին—վերաբերութիւն չունեցող կենսագրութիւնները
առանձին:

Ներկայ աշխատութեանս անվիճելի արժանիքն այն
է, անտարակոյս, որ լոյս է հանում նոր ձեռագրական
նիւթեր, նոր վաւեղագիրներ և յիշատակարաններ. թարմ
նիւթեր են 1) Նուրտինեանի երկը 1—140 էջ. 2) Սա-
րաֆեանի նամակները Մխիթար արքային էջ 201—
206. և 220—226. 3) Սարաֆեանի հաւատափոխութեան
վաւերագիրը էջ 165. 4) նրա եպիսկոպոսութեան կոն-
դակը և այլն: Յիշելու են նաև մի շարք վաւերագրներ,
որոնք վերաբերում են Սարաֆեանի ժամանակակից և
կաթողիկ աշխարհի հետ շփուած այլ և այլ եկեղեցա-
կանների:

Յանուցիր տեղեկութիւններ և փաստեր ի մի հաւաքելով, հեղինակը նպատակ ունի ցոյց տալու, թէ որքան սաստիկ է եղել հոսանքը ղէպի կաթոլիկութիւն: Կասկած չկայ, որ վերջին դարերում օտարադաւան քարոզչութիւնը յաջողութիւն ունէր հայ հասարակութեան մէջ: Այս երևոյթն ունի իր պատմական հիմքն ու բացատրութիւնը: Ափսոս, որ Հ. Գալէմքարեանը տրամադրութիւն անգամ չէ ցոյց տալիս ուրուագծելու այն իրական հողը, որ ծնունդ էր տալիս հաւատաւորութեան երևոյթներին: Դաւանաբանական վէճերի վերայ այնպէս է նայում, կարծես, խնդիրը միայն կրօնական ճշմարտութեան որոնումն է և սրա համար են այնքան ազմուկն ու գոտութիւններն. և որովհետեւ ճշմարտութիւնը հեղինակի համոզմամբ կաթոլիկութեան կողմն է, ուստի բոլոր կրօնաւորներն կամ կրօնաւորութեան միտող հայերը միայն նրա համար են թողնում մայրենի եկեղեցին և գրկում կաթոլիկութիւնը, որ վերջապէս վերահասու են լինում որոնելի և ըզմալի ճշմարտութեան: Հ. Գալէմքարեանի աշխատութեան մէջ աչքի է ընկնում—գուցէ և հակառակ նրա ջանքերին—այն, որ հեղինակը նախ և առաջ կաթոլիկ է և նրա համար թանգ են կաթոլիկութեան շահերը: Այս օրինակ ներացի վերաբերում ինքնըստինքեան թերութիւն է պատմական աշխատութեան համար. աւելին կ'ասենք—հաւատաւորութեան յաջողութիւնը վերագրել լոկ կրօնական համոզմունքի յեղաշրջման, մեր կարծիքով, նշանակում է նսմացնել, եթէ ոչ ժխտել, կաթոլիկական հոսանքի պատմական նշանակութիւնը հայ կեանքում: Մեր վերածնութեան գործում կաթոլիկութիւնը խոշոր դեր է կատարել, իր բոլոր պակասաւոր կողմերով հանդերձ: Հայ հասարակութեան զարթումի առաջին տարիներից ի վեր նրա բարձր տենչանքները յանգում էին երկու կարապետող

ձգտումների՝ քաղաքական ազատութիւն և մտաւոր վերակենդանութիւն—այս էր մեր հասարակական բաղձանքների ամփոփումն: Առաջին ձգտման ողջակէզ եղան անձնուէր ոյժեր և տենչանքը մնաց և մնաց իբր երազանք. իսկ կրթական կենդանութիւնը հետզհետէ իրականացաւ: Սաւարի մէջ խարխափող հայ կեանքը անզօր էր ծնել և անել այսպիսի ձգտումներ. սրանք իրապէս օտար ներշնչումներ էին և ծագում էին առաւելապէս կաթոլիկ քարոզիչներից: Պատրաստութեամբ բարձր լինելով հայ մակարդակից, լատին թէ մերազնեայ քարոզիչները բնականօրէն մեծ ազդեցութիւն և համակրութիւն պիտի գրաւէին ուսումնատենչ խաւերում: Սրանց հակութեամբ և երբեմն նոյնիսկ նրանց դէմ հակազդեցիկ լինելու նպատակով հայ եկեղեցականներն ևս հետամուտ էին լինում ուսման և գիտութեան, օգտուելով կաթոլիկ հրատարակութիւններից և կամ նրանց օգնութեամբ ձեռնարկելով նոր հրատարակութեանց: Գիտութեան և լուսաւորութեան անյազ տենչման զոհում էին երբեմն և դաւանութիւնը, երբ նկատում էին, որ կրօնաւորութիւնը կարող է նրանց ընձեռել դիւրութիւններ ուսանելու կամ ուսուցանելու:

Կաթոլիկ սագրիչները յուսադրում էին հայերին Հռոմայ գահի անունով և խոստանում էին քաղաքական ծրագիրները իրագործելու ևրոպական պետութեանց միջոցով: Նրանց թե և թիկունք էր Փրանսիական պետութիւնը, որի քաղաքական շահերն էլ նոյնն էին պահանջում: Բարձրագոյն դուռը վարանոտ դիրք էր բռնում, երբեմն յօգուտ կաթոլիկութեան, երբեմն հայ եկեղեցու: Տաճկական իշխանութեանց տրամադրութիւնը, ինչպէս և Փրանսիայի քաղաքականութիւնը, անտարակոյս, առաջնակարգ նշանակութիւն ունին հայ կաթոլիկ հասարակութեան զարգացման պատմութեան մէջ:

Այսպէս հայ առաջաւոր դասի ազատագրական և կրթական ձգտումները և քաղաքական աշխարհի այն ժամանակեայ կացութիւնը իրենց փոխադարձ յարաբերութեամբ կազմում են այն պատմական կուտանը, որին յինուելով կարելի կլինի լուսաւորել կաթողիկ և հայ համայնքների ընդհարումներն իր գլխաւոր ելևէջներով:

Կրօնափոխութիւնը անպայման յարմարութիւններ է տալիս նրանց, որոնք ուզում էին վերածնութեան գործին ծառայել, կապելով նրանց անմիջապէս լուսաւոր կենդրոնների հետ և ստեղծելով որոշ հովանաւորութիւն: Անշուշտ մայրենի եկեղեցուն հաւատարիմ մնալն էլ ունէր իր առաւելութիւնները, որոնցից չէին ուզում զրկուել դաւանափոխները: Այստեղից ծագում էին երկգիմի և անորոշ դրութիւններ—հաւատափոխ համարուողը այլ գոյն ունէր Հոռոմում, և այլ Պոլսում կամ գաւառներում: Այս հողի վերայ միայն կարելի է բացատրել հետեւորդներից շատերի երեւուն կեանքը և տատամսոտ գործունէութիւնը, եթէ միայն չենք ուզում համարել նրանց բաղտախնդիրներ և շահասէր արկածաւորներ:

Ներկայ աշխատութեան մէջ չի նկատուում այս կամ նման մի պատմական հայեցողութիւն. դաւանափոխների գործունէութիւնը հիմնուում է լոկ անձնական յատկութեանց վրայ, պայմանաւորուում է այս կամ այն բարեմասնութեամբ. և որքան անձը մօտ է Հոռոմին, այնքան նախանձելի է նրա նկարագիրը: Սարգիս Սարաֆեանի հակառակորդները, ըստ հ. Գալէմքարեանի, բռնկուած էին նախանձով. Սարգիս Ահագինը նրա փառքին էր նախանձում, Յակոբ պատրիարքը կասկած և երկիւղ էր կրում, չլինի թէ Սարաֆեանը պատրիարքութիւնը խլէ նրանից և այլն: Անհատական որպէսութիւնը, անշուշտ, իր յարգն ու նշանակութիւնն ու-

նի պատմութեան մէջ. բայց զարմանալի է, որ բարեմասնութեամբ օժտուած են հանդիսանում, ըստ հեղինակի, առաւելապէս կաթողիկոսեան հակուածները, եթէ մինչև իսկ հակուած տեղի է ունենում զառամեալ հատակում:

Պէտք է խոստովանել, որ անձնական որակի վրայ հիմած տեսակէտը հ. Գալէմքարեանը առնում է իր բնագրից, Յով. Նուբարեանի գրութիւնից: Սակայն այս հանգամանքը բնաւ չէ թեթեւացնում նրա պատասխանատուութիւնը: Իրաւ է, հ. Գալէմ. խոստանում է «մատչելի վաւերագիրներով բնագրի ստուգութիւնը փորձի գնել», էջ. 144. պահել նրա պատմական կէտերն առանց Նուբարեանի խորհրդածութիւններին և դատողութիւններին, սակայն խոստումն մնում է սին խոստում. և մեր հեղինակը իրօք խօսում է այնպէս, ինչպէս թելադրում է բնագիրը: Նուբարեան, իբր Սարգսի ձեռնասուն աշակերտ, թերևս չէր կարող այլապէս վերաբերուել իր ուսուցչի դալար յիշատակին քան մերձաւորի աշատութեամբ: Նրա գործը իսկապէս մի ներքող է Սարգսի անուան, ուր ոգի ի բռին աշխատում է անպարտ կացուցանել իր հոգեւոր հօր և այն դէպքերում, ուր ըստ երևոյթին լուրջ հիմքեր ունէին նրա հակառակորդները: Նուբարեանի ճշմարտախօսութիւնը հ. Գալէմքարեանի աչքում ամեն կասկածից վեր է:

Ուշի ուշով դիտելով Սարգսի կեանքը, նրա կըրթութեան և գործունէութեան պայմանները, կարելի վիճելի համարել նրա կենսագրիների լուսարանութիւնը շատ պարագաներում: Նուբարեանին թւում է, որ Սարգիս ի բնէ տրամադիր էր կաթողիկոսեան, նրա կեանքի միակ խնդիրը կաթողիկ հաւատի տարածումն և բարգաւաճումն էր, որին նուիրել էր նա իր բոլոր

ոյժերը իբրև առաջնորդ, քարոզիչ, թարգմանիչ և հրատարակիչ: Հ. Գալէմբ. ընդունում է նրա վարկույթները առանց վերապահութեան. և թէև իր ձեռքին ունի ստոյգ վաւերագիր, որից երևում է որ Սարգիս կաթողիկոս-թիւնն ընդունել է 1743 թ. բայց և այնպէս ասում է. «կարելի չէ որոշել, ո՞ր թուականէն սկսեալ Ս. յարած էր կաթողիկեայ վարդապետութեան և հասարակութեան» էջ. 166. և ապա Նուրտինեանի ազդեցութեան տակ, պնդում է. «արդէն յառաջ քան զառաջնորդութիւն Կեսարիոյ՝ որ է 1730 թ. պէտք է որ ընդգրկուած ըլլայ կաթողիկէ հաւատքը» էջ. 172. Կեսարիա առաջնորդ եղած ժամանակ Սարգիս գնում է էջմիածին 1734 թ. և եպիսկոպոսութեան աստիճան ստանալուց յետոյ դառնում է իր թեմը: Սարգսի շիտակութեան մասին վատ գաղափար պէտք է ունենալ, կարծելով որ կաթողիկեայ հաւատը ընդգրկելուց յետոյ նա ընդունակ էր էջմիածին գնալ և խաբէութեամբ եպիսկոպոսանալ: Շուտով Կեսարիայից հրաժարւում է և Յոհան Կոլոտ պատրիարքն ուղարկում է նրան Անկիւրիա: Այստեղ դաւանաբանական վէճերը և կուսակցական կրքերը խիստ սուր կերպարանք էին ստացել: Կաթողիկէները զօրանալով 7 եկեղեցիներից չորսը գրաւել էին. «Այս ինչ տհաճ չէր Սարգսի», խորհրդածում է Նուրտինեան, էջ 39. և նոյնը կրկնում է Հ. Գալէմբարեանը, էջ. 180, որ Սարգսին թէև հաճելի էր կաթողիկէների զօրացումը, բայց չէր ուզում այնտեղ գնալ: Վերջը համաձայնեց գնալ և աշխատեց մեղմել կրքերը: Անտարակոյս է, որ եթէ Սարգիս այդ ժամանակները յարած լինէր կաթողիկոսութեան կամ նոյն իսկ աննշան համակրութիւն ցոյց տուած լինէր, Կոլոտի նշման պատրիարքը երբէք նրան Անկիւրիա չէր ուղարկել: Բացի սորանից, Աւգերեան Ստեփ. եպիսկոպոսը

վկայում է, որ Անկիւրիայում եկեղեցիներում ուղղափառների (իմա կաթողիկէների) դէմ էին քարոզում և պատրիարքը հրամայել է, որ քահանաները հնազանդուեն Սարաֆեանին. չորս եկեղեցիների լեռնալիները յանձնուին նրան և հակառակող քահանաները արսորուեն. էջ. 182: Այս խօսքերից հետևում է, որ Սարգիս Անկիւրիայում դեռ ևս հաւատարիմ էր հայ եկեղեցուն. նրա կենսագիրների հակառակ հաստատութիւնը հիմն չունի, եթէ այդպիսին չհաշուենք նրանց ցանկութիւնը Սարաֆեանին ի ծնէ համարել կաթողիկ:

1740 թ. Կոլոտ պատրիարքի մահուան լուրն առնելուն պէս Սարգիս շտապում է Պոլիս: Պատրիարք է ընտրւում Սարգսի դասընկեր Յակոբ Նալեանը: Որ Սարգիս աչք է ունեցել պատրիարքական գահին, աւելի քան հաւանական է: Յակոբ պատրիարքի և Սահակ Ահագնի կասկածները այս մասին, անշուշտ, անհիմն չէին: Ն. Գալէմբարեան ժխտում է այս հանգամանքը այն համոզմամբ, որ Սարգիս փառասէր չէր և նոյնիսկ փառքէ կը փախչէր: Անկողմնակալ վերաբերումը, թերևս, պահանջէր ենթադրել, որ բարձր աթոռի յաւակնութեան անյաջողութիւնից յետոյ հաւանօրէն Սարգիս որոշում է թողնել վարչական ասպարէզը և պարապել գրական-հրատարակչական գործով: Ջախորդ թեմավարութիւնը կարող էր նրան տանել դէպի այս վճիռը: Հետևեալ 1741 թ. նրան տեսնում ենք Զմիւռնիա իբր նուիրակ երուսաղէմի վանքի: Այստեղ Սարգիս զաղտնի ընդունում է կաթողիկոսութիւն տեղւոյն պապական փոխանորդի միջոցով, ինչպէս երևում է հաւատոյ տարածման գահերէց կարգինալի պաշտօնական գրութիւնից հր. 175: Այսպէս Սարգիս 45 տարեկան հասակում, 25 տարուց աւելի հայ եկեղեցուն ծառայելուց յետոյ, մի բարի օր գալիս է այն եղրակացութեան, ինչպէս հաւատացնում

են նրա կենսագիրները, որ մինչև այն դառնաժ ճըշմարտութիւնը—մորթութիւն է եղել և ճշմարտութիւնը կաթոլիկութեան մէջ է:

Նորագաւան եպիսկոպոսը 1744 թ. ծածուկ նաւատելով անհետանում է Զմիւռնիայից: Վենետիկի վերայից անցնում է Հռոմ և վերստին դառնում Վենետիկ: Ինչ էր այս գաղտնի ճանապարհորդութեան միտքն ու նպատակը: Հ. Գալէմբ. կրկնում է Նուրտինեանի խօսքերը, որ Սարգիս ուխտ ունէր Հռոմ երթալու և սրբազան քահանայապետին հպատակելու, ապա Վենետիկի մէջ տպարան և վարժարան հաստատելու, կաթոլիկութիւն տարածելու համար: Հետագայ հանգամանքները ցոյց են տալիս, սակայն, որ Սարգսի նպատակն էր ընդհանրապէս հայ ազգի կրթութեան ծառայել և նրա ձեռնարկներին կրօնական գոյն տալը—կաթոլիկ կենսագիրների անձնական տեսողութեան արդիւնք է:

Սարգիս իրօք հաստատեց տպարան և վարժարան, բայց շուտով փակեց, միջոցների սղութեան պատճառով: Անյաջողութիւնը ստիպեց նրան վերստին դառնալ հայրենիք: Կենսագիրների կարծիքով, Սարգիս «կաթողիկեայ հաւատքը տարածելու միսիոնին էր որոշած ինքզինք իւր պերճաբան քարոզութեամբ և այս հոգեով մըտաւ հայ հասարակութեան մէջ»¹ Եր. 55, 257: Նախ քան Պոլիս ուղևորուելը, Սարգիս մեկնում է Հռոմ, գաղտնի յանձնարարականներ է ձեռք բերում, մասնաւորապէս մի վկայական, ուղղուած Պոլսի լատին եպիսկոպոսին, որի մէջ «զՍարգիս կը յանձնարարէ անոր մասնաւոր խնամքին և հոգացողութեան»² Եր. 253: Միեւնոյն ժամանակ Սարգիս միջոցներ է որոնում հայոց պատրիարքի աչքը քաղցրացնելու իր վրայ: Մինչդեռ յոյս ունէր Վենետիկ մնալ, Միսիթար Աբրալին գրած նամակներում Սարգիս եպ. կծու ակնարկներ էր անում

պատրիարքի հասցէին (փաթրիկն հայոց ըստ անուան և ըստ գործոյն համանման Յակոբայ Եր. 215. հմ. 224). իսկ Պոլիս դառնալու որոշումից յետոյ, փոխում է իր լեզուն և նոյն իսկ նամակներ է գրում նրա համակրութիւնը գրաւելու համար: Շատ խրատական է «Հայաստան» լրագրի մէջ հրատարակած նամակը, որ բեղնելու նրա վերջին տողերին: Նամակը գրած է Սարգիս իր մի բարեկամին, որտեղ ի միջի այլոց գրում է. «յանցելումն ողջունազիր իմն գրեցի առ հոգւոյս ցանկալի պատրիարք վարդապետն ի ձեռն Յօհաննէս Չէլէպույն, որոյ զպատասխան ոչ ընկալայ... Ուստի եթէ կարելի իցէ սիրազնոյզ գնալ առ նա, և յենէն ողջոյն ընծայել մեծագունիւ սիրով և քաղցրագունել ըզսիրտ նորին առ իս, զի իմ աչաց լոյս և սիրելի եղբայրս է. և մահաւանդ ի տեղի հօր և երախտաւորի կուճանաչեմ գնա: ԶԻՆՉ ԱՍԵՄ. ՊԻՏՈՅ ՉԷՐ ԱՅՍՊԵՍ ԼԻՆԵԼՆ, ԲԱՅՅ ԵՂԵԻ: Եւ յայս մօտերս և վերստին գիր գրելոց եմ առ ինքն. Եր. 232»³. Հ. Գալէմբարեան, որ Սարգսի կաթոլիկութեան վերաբերեալ ամեն մի ակնարկ խորհրդածութեան նիւթ է շինում, տարօրէն լռութեամբ է անցնում այս տողերը և չի բացատրում, թէ ինչ է նշանակում ընդգծեալ նախադասութիւնը: Միթէ պարզ չէ, որ մութ ապագայի հանդէպ Սարգիս երկդիմի քաղաքականութեան էր հետեւում, և Հռոմի հետ բարեկամական յարաբերութիւն հաստատելով, չէր ուզում հայ եկեղեցուց անջատուած համարուել:

«Սարգիս հազիւ ոտքը Զմիւռնիա կոխեց, շարունակում է հ. Գալէմբ. տեղւոյն հայերէն մեծաւ շքով և համակրութեամբ ընդունուեցաւ և մեծաւ խոհմութեամբ կաթողիկեայ հաւատը քարոզեց», Եր. 260.

Քարոզութեան արդիւնքը մեծ չէր. բայց հ. Գա-

լէմքարեան չի ուզում հաւատալ և կարծում է, որ «արդիւնքները զգուշաւոր կենսագրին մեղի աւանդածներէն շատ աւելի եղած պիտի ըլլան»։ Էջ 259: Անհիմն ենթադրութիւն է. Նուրտինեան ջանք չէ խնայում շեշտելու այն ամենը, ինչ վերաբերում է կաթողիկոսութեան:

Զմիւռնիայի առաջնորդ Սահակ Ահագինը, տեսնելով Սարգսի համբաւը, «սկսաւ նախանձել իրեն և ատել իսկ զինքն ու վարդապետութիւնը»։ Սահակ այնքան թշնամացաւ, որ գրեց Յակոբ պատրիարքին աքսորելու Սարգսին, բամբասելով, որ իբր թէ «Փռանկներու ղեսպաններուն պատուէր գացած է իրենց մեծերէն, որ Սարգիսը՝ միտող ֆռանկներու, պատրիարք ընեն, «և իբրեւ թէ այս բանը խոստովանել է ինքը Սարգիսը գինովութեան ժամանակ»։ Էջ 261. Մեր հեղինակը յաշտակոտ զրպարտութիւն է համարում Սարգսի գրութիւնը, «վասն զի Սարգիս գինարբու չէր բնաւ և որեւէ ղեսպանի ուղղուած թուղթ չունէր և ոչ ալ փառաց հետամուտ էր և ի սկզբանէ անտի փառքէ կը փախչէր»։ Նուրտինեանի ասելով, Սահակ իր գրութիւնը անխոհեմութեամբ թողնում է սենեկի մէջ և Սարգսի մէկ բարեկամը կարդալով հաղորդում է նրան։ Հ. Գալէմբ. անհիմն է համարում գինովութեան մասին պատմածը. բայց հաւատում է այս տղայամիտ զրոյցին։ Որ Սարգիսը գինարբու չէր, թերեւ հաւատանք նրա կենսագրին, բայց որ Սարգիս որեւէ ղեսպանի անուան թուղթ չունէր, անհիմն է պնդել։ Եղած տեղեկութիւնները հակառակն են վկայում։ Գիտենք, որ Սարգիս Փրանսիայի և Նապոլոյ ղեսպանների հետ մօտ յարաբերութիւն ունէր և երկրորդ անգամ Հռոմ գնալիս նրանցից վկայականներ էր վերցրել ի հաստատութիւն իր շահաւէտ գործունէութեան (էջ. 259)։ Տեսանք նաև,

որ Վենետիկից դառնալու Հռոմից յանձնարարական էր առել Պոլսի Լատին եպիսկոպոսի անուանով. աւելի քան հաւանական է, որ Նոյնպիսի յանձնարարականներ ունեցել է ևս ղեսպաններին ուղղուած։ Սահակ եպիսկոպոսը, որ Սարգսի ընկերն և բարեկամն էր և մինչև անգամ նրա մի հրատարակութեան ծախսը իւր վրայ էր առել, լոկ նախաձից գրգռուած, չէր կարող այսպիսի զրպարտութիւն յերիւրել Սարգսի վերաբերեալ, եթէ իրական հիմն չունենար։ Բնական է, որ Սահակը կասկածով պիտի նայէր մի եպիսկոպոսի, որ գաղտնի Հռոմ է փախչում, անսպասելի դառնում և Նոյն ժամանակ խուսափում է շիտակօրէն յայտնել իր դաւանանքը։ Սահակի գրութեան առթիւ Սարգիս դիմում է Յակոբ պատրիարքին—սա սիրով ընդունում է նրան, տեսնելով նրա «անկեղծութիւնը և անմեղութիւնը»։ Էր. 262: Դժբաղտաբար, հ. Գալէմբ. չի պարզում, թէ ինչ էր Սարգսի անկեղծութիւնը. արդեօք այն, որ նա պատրիարքութեան չէր ձգտում։ Բայց միթէ խնդիրն այդ չէ, այլ այն, թէ Սարգիս իրօք կաթողիկացած է, թէ հաւատարիմ է աղգային եկեղեցուն։

Գործի էութիւնը հայերի համար մութ մնաց մինչև Սարգսի երկրորդ ուղևորութիւնը Հռոմ։

Յակոբ պատրիարքի թոյլտուութեամբ Սարգիս հաստատուեց Պոլսում։ Հայերը տեսնելով, որ «Սարգիս Հռոմէն դարձաւ և հայոց յարեցաւ, կուղէին որ անիկայ նղովէ Հռովմայ օրհնեալ գահը և հռովմէական հայերը։ Բայց Սարգիս գիտէր խոհեմաբար և ըստ խըզճի վարուել, Էր. 275. Հասարակութիւնը երկուսի պառակտած մի մասը գոչում էր «ասիկայ տակաւին ֆռանկէ», միւսը—«չէ, այլևս ֆռանկ չէ»։ Կարծում ենք, որ այսպիսի հանգամանքներում եթէ Սարգիս իրօք ուղղում էր ըստ խղճի վարուել, պէտք է հասարակութեան

պահանջին գոհացում տար, և պարզօրէն յայտնէր իր դաւանութիւնը և ոչ թէ երկդիմի և կեղծ խաղեր խաղար և աղմուկներ յառաձգում լինէր:

Պատրիարքն անգամ վատահոսթիւն չունէր դէպի Սարգիսը: Կենսագիրներ ի կարծիքով, Յակոբն ուզում էր, որ Սարգիսը Փռանկ համարուի և այսպիսի հնարք մշտածէր: Սարգսին պատուիրեց քարոզել եկեղեցում այնպիսի ածներին, երբ անպատճառ պէտք է շօշափէր դաւանաբանական խնդիրներ և այնպիսի կէտեր, որոնցով հայոց եկեղեցին դանազանւում է Հռոմէականից: Սարգիս պիտի շիտակ վարուէր, «եթէ չէր այդ կեղծաւոր», ասում է իրաւամբ Նուբարինեան: Անաշառ մարդուն ցաւալի պիտի թուայ, որ հայոց պատրիարքը ուրիշ հրահար չունէր իմանալու ստուգութիւնը իր դասընկեր Սարգսից: Սակայն այլ կերպ է կաթողիկ մտածութիւնը. «Սարգիս, որ հեռատես և շրջահայեաց էր, գրում է հ. Գալէմբ. այս դաւէն չբռնուեցաւ, հապա իր բնաբան ու վկայութիւնները հայ հայրապետներէն և հեղինակներէն առնելով ուղղափառ վարդապետութիւնը կը քարոզէր յուրախութիւն ուղղափառաց. էջ 216. Ձեռք կը քարոզէր յուրախութիւն ուղղափառաց. էջ 216. Ձեռք հասկանում, թէ Յակոբի արածի մէջ ինչ դաւ կար, և թէ ինչ է նշանակում, Սարգիս չբռնուեց: Եթէ Յակոբի ցանկութիւնն էր, որ Սարգիսը Փռանկ համարուի, ինչպէս հաւատացնում է հ. Գալէմբ. և Սարգիսն էլ իրօք նոյն էր ցանկանում, իբրեւ կաթողիկեայ, ուրեմն ինչ կարիք կայ դաւից խօսելու: Սարգսին մնում էր բացէլից յայտնել իր գոյնը, որ հայերն էլ վերջապէս որոշէին իրենց գիրքը և յարաբերութիւնը: Հ. Գալէմբաւրեանը կրկնում է Նուբարինեանի անհեթեթ խօսքերը, թէ հայ հեղինակներից վկայութիւններ բերելով ապացուցեց ուղղափառ (իմն կաթողիկ դաւանութիւնը). առանց պարզելու թէ ո՞ր հեղինակներն էին: Խիստ

կասկածելի է, որ Սարգիս յայտնօրէն ուղղափառութիւն քարոզած լինէր. նախ՝ Սարգիս աշխատում էր միջին ուղիով ընթանալ, երկրորդ՝ Յակոբ պատրիարքը իր «դաւից» յետոյ նրան առաջարկեց Ռոդոսթոյի առաջնորդութիւնը: Եթէ Սարգիս մինչև այդ իրեն կաթողիկ յայտարարած լինէր, Նաբեան պատրիարքը նրան թեմ չէր տալ կառավարելու: Պէտք է ենթադրել, որ Յակոբի փորձութիւնը բոլորովին հակառակ արդիւնք է տուել, քան հաւատացնում են Սարգսի Կենսագիրները: Սահակ Ահագինը ևս թողնում է իր թշնամական վերաբերմունքը դէպի Սարգիսը: Հ. Գալէմբ. ասում է, որ երբ Սահակ նկատեց, որ Յակոբ պատրիարքը չի հալածում Սարգսին, «այն ատեն սկսաւ Սարգսի քծնել», իր 276: Սահակը բնաւ պէտք չունէր քծնելու Սարգսին. թէ կար մէկը, որի մասին կարելի էր այդպիսի խօսք գործածել դա Սարգիսն էր. թէ իրօք կաթողիկ էր, առաջնորդութիւնը կարող էր ստանալ լոկ քծնութեան գնով, իսկ թէ Յակոբին հաւատացրել էր, որ հաւատարիմ է հայոց եկեղեցուն, այն ժամանակ հասկանալի է և Սահակի վերաբերմունքը:

Ռոդոստոյ գնալու պարագաները և այնտեղից ծագած տարաձայնութիւնը Սարգսի և Յակոբ պատրիարքի միջև, որի հետեանքն եղաւ Սարգսի արքայորդ, թոյլ և միակողմանի են բացատրուած: Ոչ մի բանաւոր հիմք չկայ հաւատալու Նուբարինեանին, որ պատրիարքը խոտտացել էր աթոռի տարևոր հարկը բաշխել Սարգսին իսկ յետոյ զրթում է իր խօսքին և նրանից պահանջում գումարը: Նոյնքան հաւանական է կարծել, որ Սարգիս ինքն զլանում է սովորական տուրք վճարել և կրում է իր պատիժը: Աքսորանքից նամակներ է գրում Սարգիս իր բարեկամներին, որ բարեխօսեն նրա համար, գրում է նաև պատրիարքին, յայտնելով սրտի ցաւերն ու կրած

գրկանքները: Յակոբ ուղարկում է 100 ոսկի և մխիթարական նամակ, շուտով ևս ազատում է նրան և նշանակում Եւդոկիոյ առաջնորդ: Հ. Գալէմբարեան, հաւատում է, որ Սարգիս աքսորից դառնալուց յետոյ երբ այց գնաց Յակոբին, վերջինս «բազկատարած ներողութիւն խնդրեց իր ըրածներուն», իսկ Սարգիս ներելով գրկեց և համբուրեցան. եր. 299. Իրողութեանց հետեւողութիւնը, նրանց արամաբանական ներքին թելը պահանջում է պնդել հակառակը, որ Սարգսի ազատութիւնը և առաջնորդ նշանակուելը կարող է հետեւանք լինել միմիայն նրա զղջման, և պատրիարքին ուղղած գրութեանց: Յակոբ նշանաւոր պատրիարքներիցն է և թեթեամիտ ու կամայական գործողութեանց անընդունակ: Սարգիս ստիպողական պէտք ունէր հաշտուելու պատրիարքի հետ. շնորհիւ հաշտութեան պատրիարքը վճարեց նրա պարտքերը: Եւդոկիոյ թեմից հրաժարելուց յետոյ Սարգիսը ապրում էր Պոլիս, պատրիարքի մօտ: Յակոբի և Սարգսի յարաբերութիւնները Հ. Գալէմբ. այնպէս է ներկայացնում, որ կարծես Յակոբն է յանցաւոր Սարգսի նկատմամբ. «Երբ Յակոբ մահացու հիւանդ կը պառկէր, գրում է Հ. Գալէմբ. Սարգիս արք. կ'այցելէր, կը մխիթարէր և զինք յաւիտենական կենաց կը պատրաստէր, անցեալ գործերը յիշեցնելով զղջման կը յորդորէր, յառաջ կը բերէր այն գրքերը, զոր ընդգէմ ուղղափառութեան տպած էր, թէպէտ ինք Յակոբ ալ ըրածներուն վրայ գոհ չէր և այլն. եր. 306: Այս տեսակ դատողութիւնները միայն ստորացնել կարող են հետազօտութեան արժէքը:

Ոչ նուազ մոլորութիւն է կարծել, որ Սարգիս «ջանալով ազգն ուղղափառութեան բերել, յաջողեցաւ շատերը վաստակել» և աւելի յաջողութիւն կ'ունենար, «սակայն այլևայլ նկատումներ թոյլ չէին տար ամե-

նուն այս քայլն անելու» (եր. 313.) «կէսք առ ահին, ոմանք առ փառաց և այլ սին պատճառանաց» եր. 119. Այս մտքի անհեթեթութիւնն ևս ակնհերեւէ:

Փառք որոնողները, ընդհակառակն, շքեղ Հռոմի ուղին էին բռնում և ոչ ազքատիկ էջմիածնի: Ինք. Հ. Գալէմբարեանը յիշում է, որ այն ժամանակ յաճախակի դէպքեր էին տեղի ունենում, երբ բաղտախնդիր անձինք, նոյն իսկ աշխարհականներից կեղծ հոգեւորական էին ձեւանում և Հռոմ երթալով աշխատում էին փառքի և պատուի արժանանալ:

1772 թ. Սարգիս իր աշակերտ Նուրտինեանի հետ ծածուկ փախչում է արևմուտք, «Իբրև ուղղափառ ուղղափառների մէջ ապրելու» ցանկութեամբ: Լիվոնոյից մի խորհրդաւոր թուղթ է գրում Հռոմ, թոյլտուութիւն խնդրելով գնալ այնտեղ:

Հետո ունէր այլևայլ յանձնարարականներ. նշանաւոր են մանաւանդ գրութեան վերջին պարբերութիւնները Սարգսի նկարագրի համար «հուսկ յետոյ ծանուցանեմ, զի այժմ ի Կ. Պոլիս երկուքին կողմունք այս սինքն ուղղափառաց ձեզմատիքաց ի մեծամեծաց մինչև ցփոքունս ակնապուշ եղեալ նկատեն ի կողմն յայս, առ ի գիտել զգիրադութիւն և ուր կայանալն որպիսութեան մերոյ.» եր. 372: Հ. Գալէմբարեան խոհեմութեամբ լռեւեայն է անցնում այս նենգաւոր տողերը:

Չարմանալի է, որ Սարգիս, որ, թէև ըստ կենսագրների, յայտնապէս ուղղափառութիւն էր քարոզել 1754—1772 թ. և յանձնարարականներ ևս ունէր, բայց և այնպէս ստիպուած էր երկար գրութեամբ համոզել Հռոմին, որ ինքը վաստակաւոր անձն է: Փորձուած Հռոմը այլ կերպ էր նայում 73 ամեայ ծերունու գալստեան վրայ և պատասխանում է, որ «ժողովոյ արկղը ծանրաբեռնեալ է» (եր. 373) և թէ «նախ եպիսկոպոսունս

որք են աստ տեղադրեցից և ապա հոգասցուք զնա» (Եր. 375.) իզուր էր Սարգիսը հաւատացնում թէ դալուսան իմ ի Հոռոմ ոչ դիտէր զօգուան անձին իմոյ ի կողմանէ գրամոյ» (Եր. 373) 1773 մեռաւ, փափագին չհասած. մահից յետոյ երեաց, որ Սարգիս բաւականի հարստութիւններ էր զիգել իր քարոզչութեան ժամանակ:

Քայլ առ քայլ հետեւելով Սարաֆեանի կենսագրութեան, գալիս ենք հաստատելու ինչ որ ասացինք սկզբում—Սարգսի վերաբերումը դէպի կաթողիկոսութիւն այնքան որոշ չէ, որ տարածայնութեան տեղիք չտայ: Ճշմարիտ է, 1743 թ. պաշտօնապէս ընդունում է կաթողիկ դաւանութիւնը և ուղևորում արևմուտք, բայց յոյսերը ի դերե ելնելուց յետոյ դառնում է հայրենիք և յարում մայրենի եկեղեցուն: Որ Յակոբի պէս պատրիարքը թեմեր էր առաջարկում նրան կառավարելու և Սիմէօն կաթողիկոսը բարեկամ էր Սարգսին և տակաւին 1771 թ. ասել է վերջին փախստի նախօրէին առաջարկում էր նրան Էջմիածնի նուիրակութիւն —պերճ ապացոյցներ են, որ Սարգիս չէր նկատում սըրտով և վարդապետութեամբ կաթողիկեայ»: Յամենայն դէպս հայ եկեղեցականութիւնը նրան չէր համարում խորթացած հայ եկեղեցուց: Հաւանականն այն է, որ Սարգիս ազգի լուսաւորութեան ծառայելու տենչով տոգորուած, մտադրութիւն է ունեցել հաստատուել Վենետիկ, նման Մխիթար Աբբայի, որի համար պատրաստ է եղել անգամ զոհելու ազգային եկեղեցին, յուսալով, որ այս զոհաբերութեամբ գլխաւոր նպատակը կը շահուի: Սակայն անյաջողութեան դիպելուց յետոյ, հիասթափուած է և դառնում է հայրենիք, և մտնում վերստին հայ եկեղեցու ծոցը: Ծերութեան հասակում նախկին ծրագրերն էր նորից նրան տանում են արևմուտք, ունենալով հետը

մեծ գումար, յոյս ունէր որ այս անգամ աւելի յաջող կ'երթան նրա ձեռնարկութիւնները:

Իսկ եթէ կանգ առնենք այն տեսակէտի վրայ, որ պաշտպանում են նրա կենսագրիչները, պիտի յանգենք ամենատխուր եղբակացութեան Սարգսի անձնական յատկութեան վերաբերեալ: Եթէ յիշաւի՞նք արաֆեանը ծարաւի էր կրօնական ճշմարտութեան, պէտք է որ ամենից առաջ բացարձակ յայտնէր իր գտած ճշմարտութիւնը և ոչ թէ մօտ խաղ խաղար հայ եկեղեցականութեան հետ, որովհետև նրանից և ժողովրդից իր էութիւնը: Երկուց տերանց ծառայելը կրկնակի անգոսնելի է մանաւանդ խղճի խնդիրներում, այն էլ կրօնականի համար: Երբ մարդու մէջ պակասում է շիտակութիւնը, միւս առաքինի կողմերն անգամ կ'որցնում են իրենց արժէքը, կամ փայլում են կեղծ փայլով: Հ. Գալէմբարեան պէտք է կշռի դնէր, որ Նուրտինեաններկայ լինելով իր ուսուցչի մահուան և նրա վերջին օրերին, երբ Սարգիս իրօք ջանք չէր ինայում իր ջերմ կաթողիկոսութիւնը ցուցանելու Հոռոմի հանդէպ, ականայից յետադարձ լուսով է ներկայացնում Սարգսի կեանքն ընդհանրապէս: Նուրտինեանի կարծիքով, Սարգիս ի բնէ կաթողիկ էր. նոյնը ասում է և իր հօր համար, որից թէ և զրկուել էր 7 ամեայ հասակում, բայց զիտէ, որ «դաւանութեամբ ուղղափառ կաթողիկեայ էր, բայց նեղչաց վախէն ծածուկ կը պահէր»:

Նկատած թերութիւնները յատուկ են և միւս անձանց կենսագրութեան. նոյն միակողմանիութիւնը և նեղ կրօնական հայեցակէտը:

Հարկաւոր ենք համարում շեշտել, որ թերի և անբաւարար լուսաբանութիւնը ընդգծելով, չենք կարող ուրանալ Հ. Գալէմբարեանի աշխատութեան մեծ արժէքը. այստեղ ամբարած են հարուստ նիւթեր,

տքնաջան աշխատանք, մանրակրկիտ դիտողութիւններ, որոնք իրենց նշանակութիւնն ունեն և կը պահեն, անկախ լուսաբանութիւնից և ըստ ամենայնի արժանի են խրախուսանքի, մանաւանդ որ արժ. հայրը խոստանում է լոյս ընծայել իւր ստուար աշխատութիւնը, նուիրած հայ կաթողիկ հասարակութեան պատմութեան 1200—1830 թ.:

Սրտով ցանկանում ենք, որ նոր երկը զերծ լինի նկատած թերութիւններից և փոխան կաթողիկ տեսակէտի յառաջ բերւի որևէ պատմական գիտական ճշմարիտ տեսութիւն, որպէս զի հիմք չը լինի կրկնել կաթողիկ հետազոտողների հասցէին այն, ինչ որ Հ. Գալէմբարեանը ասում է ոչ կաթողիկէից մասին—«դժբաղդաբար կաթողիկէայ հասարակութեան վրայ ոչ կաթողիկէից զըրածները գրեթէ ամենքն սխալ կամ խեղաթիւրեալ են» (եր. 364.):

Յ. Աղունց

15 փետ. 1910 թ.

Ս. Պետերբուրգ



4. «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ» Ա. ԱԼ-ՊՈՅԵԱՃԵԱՆԻ

Ընդհանրապէս պէտք է նկատեմ, որ Ալպոյեանէանի 729 ձեռագիր և 92 տպագիր էջերից բաղկացած, բարտէզներով և ծանօթութիւններով ձոխացած՝ ստուար աշխատութիւնը իւր ներքին արժանիքներով բոլորովին անհամապատասխան է արտաքին պատկանելի երևոյթին: Նա անկասկած մեծ ջանք է գործ դրել, հայերէն և օտար բաղմազան աղբիւրներ ունեցել է աչքի առաջ և առատ նիւթ է ժողովել նոցանից, բայց դժբաղդաբար չի կարողացել օգտուել այդ նիւթից, ինչպէս հարկ է, դասաւորել ու ամփոփել այնպէս, որ նորա երկասիրութիւնը գոնէ փոքր ի շատ է բաւարար նախագիծը ներկայացնէր «հայ գաղթականութեան պատմութեան» և հարեանցի գաղափար տար հայ գաղթականութեանց անցեալի ու ներկայի մասին: Տեղտեղ նա տալիս է իւր աղբիւրների անունը. բայց սովորաբար առանց յիշատակութեան է թողնում, և իւր պատմութիւնն անում է այն հնացած և անընդունելի եղանակով, որ հնարաւորութիւն չէ ընծայում որոշելու, թէ ի՞նչ տեղեկութիւններ, ի՞նչ տեսակ աղբիւրներից են վերցրած, որ տեսութիւնը կամ կարծիքը հեղինակին է և որքան օտարին: Առհասարակ նորա համար, կարծես, բոլոր աղբիւրները հաւասար արժէք ունեն՝ ինքն դրա մի համբալի թուցիկ լրագրական

յօդուածներ, թէ եւրոպական գիտնականի լուրջ գրուածքներ: Տարօրինակ է մանաւանդ նիւթի դասաւորութիւնը:

Իւր աշխատութիւնը սկսում է նա մի ընդարձակ ներածութեամբ, ուր նախ ակնարկ ձգելով հայ գաղթականութեանց վրայ՝ կամենում է բացատրել նոցա ծագման «ընական» և «քաղաքական» պատճառները. ապա մի քանի տեղեկութիւններ տալով Հայաստանի տեղագրութեան, կլիմայի, ազգաբանութեան մասին՝ անում է բաւական մանրամասն պատմութիւնը, ամենահին օրերից սկսած մինչև մեր ժամանակը, և կցում դորան շահեկան խորհրդածութիւններ գաղթականութեան կրած ազդեցութեանց մասին: Եւ ահա, մինչ սպասում էք, թէ կսկսէ գաղթականութիւնների բուն պատմութիւնը, նա դեռ նոր Հայաստանի պատմութիւնը բաժանում է եօթ շրջանների և 174-րդ էջերից սկսում դարձեալ շրջան առ շրջան աւելի մանրամասնօրէն Հայոց աշխարհի և հայ ժողովրդի անցեալը նկարագրել, մէջ ընդ մէջ ենթադրութիւններ և դիտողութիւններ անելով, թէ ինչպէս պատմական հանգամանքներ այս կամ այն գաղթականութիւնն են յառաջ բերում: Վերջապէս 466-րդ էջը հասնելով՝ մի համառօտ նախաբանից իմանում էք, որ հեղինակը պէտք է անէ այժմ Հայաստանին դրացի երկրներում հաստատուած գաղթականութեանց պատմութիւնը և յետոյ անցնէ «բուն գաղթավայրերուն, որոնք որոշապէս Հայաստանի սահմաններէն հեռու կը գտնուին»: Բայց կրկին յուսախաբութիւն: Վրաստանում բնակուող հայութեան մասին կցկտուր, հարևանցի տեղեկութիւններ ստանալուց առաջ դուք պէտք է համբերութեամբ կարդաք վրաց ազգի ամբողջ համառօտ պատմութիւնը: Իսկ երբ անցնում էք Աղուանից աշխարհը, փնտում էք ապշած՝ սորա

մասին ևս վայրիվերոյ պատմական ու աշխարհագրական տեղեկութիւններ ստանալուց յետոյ, կարդալով հետեւեալ տողերը. «Այդ հայաբնակ վայրերը ընդարձակօրէն ներկայացուցած են երկու բանասէրներ ընդարձակ աշխատասիրութիւններով, այնպէս որ աւելորդ կը դատենք մեր կողմանէ բան մը աւելցնել և ընթերցողը կը զրկենք հետեւեալ երեք հատորներուն»: Նման պարբերութիւններ այնուհետև յաճախ կրկնուում են, և Հայաստանի հարևան երկրների, թէ օտար գաղթավայրերի մէջ հաստատուած հայութեան մասին՝ փոխանակ ըստ կարելոյն բազմակողմանի և ճշդուած ծանօթութիւն տալու, հեղինակը բաւականանում է սովորաբար այն գրուածները թուելով, որոնց մէջ տեղեկութիւններ կան այդ գաղթականների նկատմամբ: Այն տեղեկութիւններն ևս, որ նա ինքն է հաղորդում, մեծ մասամբ ներածական բնավորութիւն ունեն: Իսկապէս նորա ամբողջ աշխատութիւնը աւելի ներածութիւն է հայ գաղթականութեան պատմութեան, քան բուն պատմութիւնը և որ 421 էջ հաշուող այդ տեսակ մի գրուածքի մէջ շատ բան աւելորդ է ասուած ու ոչ մի առնչութիւն չունի բուն նիւթի հետ, շատ բան անտեղի կերպով կրկնուած է, շատ բան սխալ է կամ թեթեւօրէն, առանց ուէք քննադատութեան ու ստուգութեան գրի առնուած—գիւրիւն է մակարերի: Սակայն այդպիսի թերութիւններով զբաղուելը մեզ շատ հեռու կտանէր. իբրև նմուշ կ'իշխենք միայն հեղինակի մի քանի տարօրինակ տեսութիւններն ու անհիմն տեղեկութիւնները:

Էջ 191 Յ ու է ի ա ն ո ս պարզապէս շփոթած է Յօրինոսի հետ, որ նորանից յետոյ կայսր ընտրուեցաւ:

Էջ 209—210 տ խ մ ա ր է անուանած հայոց «միտումը—միշտ յունական լուծը նախապատիւ համարելը», և քիչ յետոյ իբրև մի ճ ա կ ա տ ա գ ը ա կ ա ն

դ ժ ք ա ղ դ ու թ իւն է նկատուում, «որ հայերը աւելի շատ արևմուտք գաղթած են, քան թէ արևելք», որովհետև իբրև թէ «անոնք որ յունական-քրիստոնեայ երկիրներ գաղթած են, աւելի շուտով կորուսած են իրենց ազգային նկարագիրը և ինքնագոյութիւնը, քան թէ անոնք, որ պարսից երկրին խորերը տարւած են», մինչդեռ մեր պատմութեանը նոյն իսկ հարևանցօրէն ծանօթ ամեն մէկի համար պարզ պիտի լինի, որ հայերի միտումը դէպի արևմուտք՝ քաղաքակիրթ աշխարհի հետ կապուելու, ազգային ինքնութիւնը պահպանելու, ուրիշ նման արևելեան ազգերից աւելի կենսական ոյժ և քաղաքակրթութեան ընդունակութիւն պահելու հիմնական պատճառն է եղել. իսկ գաղթական հայերից գրեթէ միայն նօքա են երկար ժամանակ դիմացել, պատմական դեր կատարել և մեր ազգային կեանքի համար նշանակութիւն ունեցել, որոնք դէպի արևմուտք են գաղթել, այն ինչ «Պարսից երկրին խորերը տարուած» անթիւ անհամար դժբաղդներ ամենակարճ միջոցում կորուսուել, անհետացել են: Ո՛չ Սմբատ Բագրատունի մարզպանի Վրկանայ աշխարհի մէջ հայեր գտնելու հանգամանքը, որին Ռլպոյաճեան չափազանց մեծ կարևորութիւն է տալիս, և ոչ Շահաբասի տարած գաղթականութեան կարևոր պատմական նշանակութիւնը հակառակն ապացուցանել կարող են. առաջինները խղճալի մնացորդներն էին միայն հազարաւոր անդարձ կորուստների, իսկ վերջինը Շահաբասի և իւր յաջորդների ուրոշ քաղաքականութեան շնորհիւ ժամանակաւոր փայլ ունեցել է, և Պարսկաստանում հաստատուելով այնպիսի մի ժամանակ, երբ բուն պարսիկ ժողովուրդը իւր կլանող կենսունակութիւնը կորցրել էր արդէն, կարողացել է մինչև այժմ պահել իւր գոյութիւնը,

թէպէտև այն հաղար ու մի տառապանքով, բայց թէ քնն են քաշել ուրիշ անթիւ բախտակիցներ և ուր են մնացել մինչև Միջին Ասիայի խորքերը տարուած գաղութներ՝ դժբաղդաբար փոքր ի շատէ բացայայտ յիշատակարան անգամ չէ մնացել, որ պատմէ:

Էջ 214 Յուստինիանոս Մեծ կայսրը, բիւզանդական պետութեան վերանորոգիչը և նորա պատմութեան այնչափ փառաց էջեր ընծայողը՝ անուանած է «քահանայ կայսր», իսկ էջ 231 բոլորովին անհիմն և պատմութեան անտեղեակ կերպով «կրօնական քաղաքականութեան հիմնադիր» և «հակաքաղկեդոնական շարժման գլխաւոր հալածողը», մինչդեռ Մեծն Կոստանդիանոսից ի վեր շատ քիչ բիւզանդական կայսրեր են եղել, որ կրօնական խնդիրներով չզբաղէին, և Յուստինիանոս, ինչպէս յայտնի է, աւելի հովանաւորող է եղել, քան թէ հալածող հակաքաղկեդոնականների. նա աշխատել է միայն Քաղկեդոնի ժողովի հեղինակութիւնը պահելով՝ հակաքաղկեդոնականներին ամեն կերպ սիրաշահել և նոցա ուսուցման համեմատ ձեռնկերպել տալ եկեղեցւոյ դաւանութիւնը:

Էջ 242 սկսւում են մի շարք անհեթեթ դատողութիւններ արաբների պատմական դերի և նոցա հետ հայերի ունեցած յարաբերութեանց մասին, որոնց պըսակն է էջ 286 յառաջ բերած իմաստակութեան այն գոհարը, թէ արաբները «աւելի փրկարար դեր կատարած են Հայաստանի ճակատագրին տեսակէտով, քան թէ կործանարար» — այն արաբները, որ ամբողջ քրիստոնեայ արևելքը աւեր անապատ դարձնելով՝ Բուղայի նման փրկիչներ ուղարկեցին Հայաստան, Նախիջևանի սոսկալի եղեռնը նիւթեցին, արևելքն ու արևմուտքը հաւասարակշռութեան մէջ պահող հայ անկոտրում և անդնջում նախարարական տները ընաշինջ արին և ա-

ռանձրին անգամ օտարներին մշտական բնակութեան տեղ
դարձրին մեր երկիրը: Անապատի այս սև որդւոց դա-
ժան լուծին չենթարկուելու յամառութիւնը հայոց
կողմից «կրօնասէրի տխմար միամտութիւն» համա-
րել և անհամար գերիներ տանելուց դատարկուած
Հայաստանը իբրև խաղաղ բնակութեան մի երջանիկ
վայր ներկայացնել՝ այն միամիտ տեսութեամբ, թէ
«գերիները երկրէն դուրս չէին հանուեր», այլ Դուին
քաղաքին մէջ «կը համախմբուէին»: Երբվհետև այդ-
տեղ էր նստում «Արաբաց կողմանէ կարգուած ոստի-
կանը»—կնշանակէ միայն ծաղրել ճշմարիտ պատմու-
թիւնը:

Պակաս անհետկիթ չեն 251—252 էջերում շարած դատողութիւնները պատկերամարտների և այլ «աղանդների» մասին, որոնք ապացուցանում են թէ հեղինակը հշ աղանդ բառն է հասկանում, հշ էլ պատկերամարտութեան հետ կապուած հաագին պատմական շարժման մասին գաղափար ունի: Նա ազատամտութեն բարձրացնում է ձթոնդրակեցիներու աղանդը, որ եղծուած և խառնակեալ քրիստոնէութեան դէմ կը կանգնեցնէր ս. գրքի ճշմարիտ քրիստոնէութիւնը», բայց նոցա ծագման և նշանակութեան մասին նոյնքան քիչ բան գիտէ անշուշտ, որքան Պողիկեան, «Մ ան ի կ է ա-ցի» և այլ հին ու նոր աղանդաւորների մասին: Իսկ թէ ինչպէս է կարգում և բացատրում իւր առաջին ե-եղած պատմական գրութիւնները՝ փառաւոր օրինակ է էջ 275, իբր Ասողիկ Գ, դպ. ԽԳ գլխից հանած տե-գեկութիւնը: Ասողիկ պատմում է, թէ ինչպէս Վասիլ կայսրը Հանձիթից և Բալուից անցնելով՝ բարձրա-նում է Կոհեր լեռը, որ գտնուում էր Հաշտեանից, Մո-փաց և Խորձենույ մէջ, իսկ Ալպոյաճեան եղրակացնում է այդտեղից Հաշտեանքի և Հանձիթի որոշ իշխանու-

Թիւներ լինելը, ինչպէս նաև «Ծովաց, Խորձենց, Բալուայ երկիրներու անկախութիւնը»: Հեգնութիւն Հէ ալս:

Ի՞նչ ասենք հասլա այն այլանդակութեանը, որ Շահ-Աբասի դժոխային ծրագրով Արարատեան աշխարհից պոկած, հազարաւոր զոհեր երասխի յորձանքներին, սովի, սրի ու ճանապարհի զրկանքներին տալուց յետոյ Պարսկաստանի խորքերը հասցրած գաղթականութիւնները համարոււմ են «Ղարապաղի և Գողթան գաւառի կողմերէն յօժար կամքով տեղափոխուած», (էջ 439) ինչպէս բնորոշենք այս տեսակ անմիտ դարձուածներ «կղերը աղատութեան մէջ կըթաւալէր և եկեղեցին կը խայտառակէր» (էջ 451), անորոշ կերպով այնպիսի մի ժամանակարջանի համար գործածուած, որ իւր մէջ առնել կարող էր ոչ միայն 1441 թուի պանծալի ժողովի հայերին, այլև ժէ. և ժԸ. դարերի մեծագործ հայրապետներին ու վարդապետներին՝ Սովսէս Տաթևացուն, Փիլիպպոսին, Սիմէօնին:

Սակայն բաւական համարելով մեր արած զիտո-
ղութիւնները՝ հասկանալի դարձնելու համար, որ Ալ-
պոյանէանի երկասիրութիւնը ոչ միայն ամբողջացած
պատմութիւնը չէ հայ գաղթականութեան, այլ և իր-
րև մի անկերպարան ժողովածու այդ գաղթականու-
թեան հետ հեռու մօտիկ առնչութիւն ունեցող նիւ-
թերի՝ վստահութիւն չէ ներշնչում ամենեւին, եզրա-
կացնում ենք, որ ոչնչով արժանի չէ այն մրցանակի:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՀԱՅԿԱՔԵՐ 1909
Ս. Էջմիածին.

5. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ. ԱՐՇԱԿ
ԱԼՊՈՅԱՃԵԱՆԻ

Այս ստուար հատորը բաղկացած է երեք մասից. 1) Ներածութիւն, 2) Հայ գաղթականութեան պատմութիւն և 3) Յաւելում—Առաջնորդական վիճակներ, թեմագրական ուսումնասիրութեան մի փորձ: Գաղթականութեան պատմութիւնը պարունակում է երկու հատուած. ա) Հայաստանէն մեկնող գաղութներ, բ) հայկական գաղութներ:

Ներածութիւնը 173 երես գրաւող մի տեսութիւն է հայոց պատմութեան, աւելի ճիշտ Հայաստանի պատմութեան նախնական ժամանակներից սկսած մինչև մեր օրերը: Այս մասում մեծ տեղ է տուած երկրի բնական նկարագրին՝ մակերևոյթի կազմութեան, կլիմային, հրաբուխներին և այլն, և աշխատած է ցոյց տալ նրանց ազդեցութիւնը բնակիչների կազմութեան և պատմութեան վրայ. այս բացատրութիւնները թերևս ինքնըստինքեան հետաքրքրական, բայց գրուածքի բուն նիւթի՝ գաղթականութեան պատմութեան հետ անմիջական կապ չունին ե չեն կարող ծառայել իբրև այդ երևոյթի բացատրող պատճառներ: Հեղինակը երկար կանգ է առնում թէ հայոց ներքին կեանքի և թէ հարեան պետութիւնների կեանքի մէջ կատարուած իրողութիւնների վրայ. նկարագրում է յունաց եկեղեցու ներքին՝ դաւանական պառակտումները և եկեղեցու մէջ կատարուած փոփոխութիւնները. երկար

պատմում է Սասանեան և բիւզանդական պետութիւնների փոխադարձ յարաբերութիւններն ու ընդհարումները, ինչպէս նաև բիւզանդացոց և արաբների և բիւզանդացոց ու սելջուկեան թուրքերի ընդհարումների մանրամասնութիւնները, որոնք թէպէտև հետաքրքրական և ուսանելի, սակայն հանրածանօթ են և անմիջական կապ չունին հայոց գաղթականութիւնների պատմութեան հետ: Գաղթերի պատճառը ցոյց տալու համար բաւական էր կարճ յիշատակել, առանց երկար բացատրութիւնների մէջ մտնելու, այն պատմական, իրողութիւնները միայն, որոնք գրեւել են հայերին մայրենի երկրից դուրս գալու և թէ կամաւ, թէ բռնի ուժից ստիպուած ուրիշ երկիրներ դիմելու: Մինչդեռ մանրամասնութիւնների մէջ մտնելով, հեղինակը յառաջաբանի մէջ տուիւ է հայոց ամբողջ պատմութեան տեսութիւնը, հայոց և հարեան երկրների ներքին հանգամանքների վրայ խօսելով, որոնք գաղթերի պատմութեան հետ անյայտնի առնչութիւն չունին: Հետագայ գլուխների մէջ, որտեղ հեղինակը է տալիս է տեղի ունեցած գաղթերի պատմութիւնը, բաւական մանրամասնօրէն պատմում են զանազան շրջանների պատմական անցքերն ու փոփոխութիւնները, և քանի որ ներածութեան բովանդակութիւնը գրեթէ նոյնն է, ուստի վերջինս գրուածքի բուն նպատակի տեսակէտից միանգամայն աւելորդ է դառնում, և գիրքը ոչինչ չէր կորցնիլ, եթէ սկսուէր անմիջապէս գաղթականութիւնների պատմութիւնից:

Պատմութեան Ա. մասում ևս շատ տեղեր անհրաժեշտ չեն գաղթականութիւնների պատմութեան և պատճառների բացատրութեան համար: Այսպէս՝ կան երկար բացատրութիւններ նոր գիտական հետազոտութիւնների հիման վրայ, Արմէնների սկզբնական բնա-

կալայրի և նրանց Հայաստանում հաստատուելու մասին: Չափազանց երկար պատմուած արաբաց տիրապետութեան սկզբնական շրջանը, սելջուկերի շարժումներն ու ճիւղաորութիւնները, որ դարձեալ բուն նիւթից շատ հեռու են. պէտք էր սկսել անմիջապէս 360 երեսից, որտեղ ցոյց է տրւում, թէ ինչ հայ գաղութներ գտան սելջուկներն իրանց տիրած երկիրներում:

Որովհետեւ Ա. մասը բաժանուած է ժամանակագրական շրջանների և իւրաքանչիւր շրջանում տեղի ունեցած բոլոր գաղթականութիւնների մասին է խօսուում, ուստի և ամեն մի գլխում միևնոյն պատմական իրողութիւնների յիշատակութիւնն է լինում և կրկնութիւններ անխուսափելի են դառնում, նիւթը շատ ցլըւում է և ճապող նկարագրի տպաւորութիւն է թողնում: Մինչդեռ եթէ գաղթերի պատմութիւնն ըստ ժամանակագրական շրջանների համառօտ լինէր, իսկ դրա փոխարէն գրքի կեդրոնական, գլխաւոր մասը կազմէր առանձին երկրների հայ գաղութների պատմութիւնը, որ այս գրութեան բ. մասի նիւթն է, կարելի կըլինէր կրկնութիւններից խուսափել, և ընթերցողն աւելի պարզ ու ամփոփ գաղափար կստանար սկզբնական ժամանակներից մինչև վերջերը դէպի այս կամ այն երկիրը գանազան հանգամանքներում տեղի ունեցած գաղթերի և այդ երկիրներում հաստատուած գաղութների պատմական կեանքի մասին: Բ. Մասում ևս իւրաքանչիւր երկիր տեղի ունեցած գաղթերի մասին խօսելիս տնխուսափելիօրէն կրկնում են այդ գաղթերն առաջ բերող պատմական հանգամանքները. այսպիսով միևնոյն պատմական իրողութիւնների մասին յիշատակութիւն է լինում գրքի մէջ երեք անգամ. ներածութեան, Ա. և Բ. մասերի մէջ, որով գրքի ծաւալը չափազանց ընդարձակում է ի վնաս բուն նիւթի: Եթէ երկրի և հարևան

ազգերի պատմութեան վերաբերեալ մասերն այդքան մեծ տեղ չբռնէին, ծաւալը նոյնը պահելով, կամ աւելի եւս փոքրացնելով, հնարաւոր կըլինէր աւելի մանրամասնօրէն ներկայացնել գաղթերի և գաղութների պատմութիւնը:

Գաղթականութիւնների պատմութեան մէջ սպասելի էր տեսնել կարևոր գաղթականութիւնների վիճակը բազմակողմանի և ըստ կարելոյն մանրամասն, նրանց տնտեսական, քաղաքական, իրաւական և հոգևոր-կրթական վիճակը, ի հարկէ, որքան հնարաւոր է ձեռքի տակ եղած աղբիւրներից. առանձնապէս ուշադրութիւն պէտք էր դարձնել գաղութների կրած փոփոխութիւնների վրայ ժամանակի ընթացքում, և եթէ ձուլուել են, ձուլման պատմութեան ու պատճառների վրայ ցոյց տալ նրանց արդի վիճակը: Մինչդեռ այն տեղեկութիւնները չկան այնպիսի կարևոր գաղթականութիւնների վերաբերմամբ, ինչպէս են Հնդկաստանի, Մոլդավայի, Տրանսիլվանիայի, Ղրիմի, Բուքովինայի, Բեսարաբիայի, Լիհտաւանի և Ռուսաստանի գաղութները:

Փոխանակ այսպիսի կարևոր տեղեկութիւններով գրութեանը ճոխացնելու հեղինակն առաջարկում է ընթերցողին իւրաքանչիւր գլխի վերջում գաղութին վերաբերեալ գրութեանը ցուցակներ, մինչդեռ անհրաժեշտ էր այդ գրութեանը կարևոր տեղեկութիւնները քաղել և ի մի ամփոփել այսպիսի մի աշխատութեան մէջ, դրա փոխարէն կրճատելով ներածութիւնն ամբողջապէս և Ա. մասի գլուխ ներքին պատմութեան վերաբերեալ տեղերը:

Պատմական շատ իրողութիւնները նկատմամբ հեղինակը հաւատարիմ է աւանդական տեսակէտներին. ընդունում է իբրեւ ստոյգ իրողութիւն, թէ հայերը «դաշնակցեցան Կիւրոսի հետ և Բաբելոնի առումին մայր-

նակցեցան» (եր. 38), մինչդեռ այս ստուգման կարօտ է: Վրաց գրերի գիտի վերաբերմամբ վաւերական է համարում հայ աղբիւրների հաղորդածը և առանց հիմնաւոր քննութեան սխալ է համարում վրաց աղբիւրների տեղեկութիւնները (եր. 472.): Մամիկոնեանների չինական ծագման մասին ոչինչ կասկած չունի, մինչդեռ պատմական քննադատութիւնը վաղուց կասկածի է ենթարկել այս իրողութիւնը: Յայտնի չէ թէ որտեղից բերում է ոմն Արքանամ վարդապետի պատմութիւն, որ հիշքէի 4 թուին գնում է Մեքքէ և Մուհամմէզից թուղթ է ստանում «Երուսաղէմի հայոց վանքերի, հաստատութեանց և հայ կրօնաւորներու ազատ շրջագայութեանց և ուխտաւորներու ազատ երթևեկութեան համար». այս պատմութիւնն, անկասկած, առասպել է, որովհետեւ, բացի այն, որ հիշքէի 4 թուին (626) Մուհամմէտ Մեղինայումն էր և ոչ Մեքքայում, այդ ժամանակ Արաբիայի մի նեղ շրջանակից դուրս գաղափար անգամ չունէր Մուհամմէզի գոյութեան մասին և չէին կարող գուշակել արաբների ապագայ զօրութիւնը, որպէս զի կարիք զգացուէր ապահովութեան թղթերի: Այդպիսի թղթերը յետին ժամանակների գործ են, նախնական ժամանակներին վերագրած:

Կան նաև չճշտուած տեղեկութիւններ. այսպէս, հեղինակի կարծիքով (եր. 64) Մահակ և Մեսրոպ պարսից հալածանքներից ստիպուեցան փախչել յունական բաժինը, մինչդեռ անմիջական աղբիւրները՝ Կորիւն և Ղազար Փարպեցի այդպիսի տեղեկութիւն չեն հաղորդում: Ըստ հեղինակի Հերակլ կայսրը Հայաստանին տիրելով հասաւ Ատրպատական... «հոն սպանեց պարսից թագաւորը» (եր. 88). իսկ հետեւալ, 89 երեսում Հերակլ 627 թ. վճռական ճակատ է տալիս Նինուէի մօտ, քանդում է Դաստակերտ, յետ է դառնում Փոքր

Ասիա և ճանապարհին լսում է Պարսից Խոսրով թագաւորի մահը 628 թուին. պարզապէս հակասող տեղեկութիւններ: Ըստ հեղինակի (եր. 191) Յուլիանոս պարսից հետ դաշն է կնքում և պարսիկներից առած երկիրը յետ է դարձնում. մինչդեռ դաշն կնքողը Յուլիանոսն էր, Յուլիանոսի յաջորդը: (Գուցէ տառասխալ) Թովմա Մեծորեցու խօսքերից (էջ 12), թէ հայերը ցրուեցան «ի Մոր, ի Սորասան, ի Պաղտատ և ի Տաճկաստան» դժուար է եզրակացնել, թէ հայերը ցրուեցան «Թուրքիոյ զանազան մասերը», ինչպէս հեղինակըն է կարծում (եր. 406): Տաճկաստան ասելով Թովմա Մեծորեցին 15 դարում, երբ Թուրքիոյ նորակազմ պետութիւնը դեռ փոքր էր հեռու Հայաստանի սահմաններից, անշուշտ նոյնն էր հասկանում, ինչ որ մեր պատմիչներն առհասարակ, այն է՝ Ասորեստանի և Միջագետքի հարաւային մասերը, որտեղ բնակում էին արաբ ցեղեր: Խորագմիա ըստ հեղինակի Խորասանն է (եր. 370), մինչդեռ Խորագմիա կամ Խուարեզմ Ամու դարիայի գետաբերանի մօտերը, Արալ լճից հարաւ տարածուած երկիրն էր, այժմեան Խիւան, իսկ Խորասանն այժմեան Պարսկաստանի հիւս. արևելեան մասը: Թէոդոսուպօլիս (Կարին) համարում է Այրարատեան նահանգի մայրաքաղաք (եր. 102) Արտաշատ դնում է Եփրատի ափին (եր. 182, նաև քարտէզ Ա.) Ասորիք և Սիրիա տարբեր է նկատում, (եր. 351), թոյլ է տալիս գիտական աշխատութեան մէջ այնպիսի սխալներ, ինչպէս «Իսլամ», փոխանակ «մուսլիմ»-ի, որ առհասարակ չեն զանազանում մեր գրականութեան մէջ նոյն իսկ տաճկահայերը, «Էմիր էլ Միւլիմին», փոխանակ «Ամիր էլ Մուլիմին»-ի և ուրիշ անճշտութիւններ, որոնք միառմի թուելն այս զեկուցման մէջ աւելորդ ենք համարում, թողնելով քննադատութեան:

Իւր աշխատութեան համար հեղինակն օգտուել է բազմատեսակ աղբիւրներից և օժանդակ միջոցներից թէ հայերէն և թէ օտար լեզուներով: Բացի առանձին գաղութներին վերաբերեալ գրուածքներից, որոնց ցուցակը տալիս է գրքի մէջ շատ տեղերում, հեղինակն օգտուել է նաև նամակներից, գրքերի յիշատակարաններից, կաթողիկոսական կոնդակներից, լրագրական յօդուածներից և այլն: Այսոս միայն, որ շատ գէպքերում կարևոր աղբիւրների վրայ ճիշտ ցուցումներ չկան: Այսպէս՝ հր. 399 ասում է երբ թաթարները ողողեցին Իկոնիոյ Սուլթանութիւնը, հայերն այնտեղից ապաստանեցան Մոլտավիա, Լեհաստան, Ռուսիա, նաև Վենետիկ, Ճենովայի և Պիզայի տիրապետութեան տակ գրաւուող արևելեան կալուածները, «որոնք հայերով լեցուեցան ԺԲ. և ԺԳ. դարերում, ինչպէս կերելի վաւերական յիշատակարաններէ»: որոնք են սակայն այդ խիստ կարևոր վաւերական յիշատակարանները, մնում է անյայտ, մինչդեռ այսպիսի աշխատութեան մէջ առաջնակարգ կարևորութիւն ունէր այդ յիշատակարանները բոլորը ցոյց տալ, նրանց վաւերականութիւնը հաստատել և նրանց պարունակած բոլոր տեղեկութիւնները շահագործել: Եր. 417 մեղադրում է մեր պատմիչներին, որ լուրթիւն են պահում գէպի Եւրոպա, նաև Միջերկրականի կղզիներն ապաստանող հայերի մասին, և ասում է, «ինչ որ այսօր ունիմք իբրև ծանօթութիւն, գրեթէ ամբողջապէս քաղուած են այնպիսի յիշատակաբաններէ, որոնք այդ երկիրներում մէջ գտնուած են». այս յիշատակարանները նոյնպէս մնում են անյայտ: Եր. 483 ակնարկութիւն է անում ինչ ինչ յիշատակաբանների վրայ, որոնք վկայում են, թէ հայերը Թիֆլիսի մէջ մեծամասնութիւն են եղել կազմած նոյն իսկ վրաց թագաւորութեան ժամանակ, այս յիշատակարան-

ները նոյնպէս չի ցոյց տալիս: Տեղ տեղ յիշում է մեծ կարևորութիւն ունեցող աղբիւրներ, որոնց մասին անհրաժեշտ էր աւելի մանրամասն ծանօթութիւն տալ. այսպէս, ասում է, թէ Ռոտտսթոյում գտնուած 30-ի մօտ հայերէն ձեռագրերից մի քանիսը «գաղթականութեան պատմութեան տեսակէտով իրենց շահեկանութիւնն ունեն». անհրաժեշտ էր ոչ միայն մանրամասն տեղեկութիւն տալ այդ ձեռագրերի մասին, այլ և գաղթականութիւններին վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները քաղել, նոյն իսկ կարևոր հատուածներն ամբողջապէս մէջ բերել: Յաւելուածի մէջ (հր. 348) կարդում ենք. «Արարական տարեգրութիւնք կը հաստատեն, թէ միայն հայերուն տրուեցաւ այն ատեն (արաբաց տիրապետութեան ժամանակ) Երուսաղէմի մէջ պատրիարքական իշխանութեամբ եպիսկոպոս մը ունենալու իրաւունք, իբրև անմիջական յաջորդ և տէր Ս. Յակոբեան առաքելական աթոռոյն». բայց արարական ռը տարեգրութիւններն են այս հաստատում, այդ մասին հեղինակը դարձեալ ոչինչ չի ասում: Իտալիոյ հայ գաղթականութիւնների մասին խօսելիս նկատում է, թէ գրուածքների մեծամասնութեան հեղինակները կաթողիկ լինելով, «պապականութեան երեսէն հայոց կրած տառապանքները անկողմնակալ կերպով չեն ներկայացուցած և խեղաթիւրութիւններ ըրած են»: Իսկ թէ ռը գրուածքների մէջ ինչ խեղաթիւրումներ են արուած, կամ ինչ տառապանքներ են կրել հայ գաղթականները պապականութեան երեսէն, չի պարզում:

Շատ գէպքերում ցոյց չի տուած յայտնի աղբիւրների ճիշտ տեղերը՝ գլուխ, երես, տպագրութիւն և այլն, օր. 198 յիշմում են Պրոկոպ, Խորենացի, Զաքարիա, այլ և ուրիշ տեղերում զանազան աղբիւրներ ու հեղինակներ յիշում են, բայց գլուխ, երես և այլն ցոյց չի տրը-

ւում, որով տեղեկութիւնների ստուգումը ընթերցողի և քննադատի համար դժուարանում է: Յայտնի չէ նաև, թէ ինչ աղբիւրների վրայ է հիմնուած այն ենթադրութիւնը (եբ. 361), թէ Վրկանքի, Սազաստանի գաղթականները Սելջուկների տիրապետութեան ժամանակ մասամբ Կիլիկեան շրջանակը, Միջագետք և այլն ապաստանած են:

Զնայելով այս թերութիւններին, որ այսպիսի մի ստուար աշխատութեան մէջ գրեթէ անխուսափելի են, տեղեկութիւնները քաղուած են բազմատեսակ աղբիւրներից, ուստի և մի քանի մասերում գաղթականների երկրից դուրս գալու և հետզհետէ հեռաւոր երկիրներ տարածուելու պատմութիւնն ստացուել է ճոխ և հետաքրքրաշարժ: Հեղինակի հայեացքը գաղթականութիւնների վրայ միանգամայն ուղիղ է. նա աշխատել է արդի պատմական հետազոտութիւնների տուած հնարաւոր միջոցներով ճիշտ որոշել հայ ցեղի սկզբնական բնակութեան երկիրը, ապա ժամանակի ընթացքում ցեղի հետզհետէ տարածուելը նախնական երկրի սահմաններից դուրս: Գաղթականութիւնն ասելով նա հասկանում միայն Հայաստանից հեռու ընկած երկիրներ տեղի ունեցած գաղթը, այլ նաև հայերի տարածումը հնագոյն ժամանակներից սկսած սահմանակից երկիրները, ինչպէս Ատրպատական, Հիւսիսային Միջագետք, Ասորիք, Կիլիկիայ Կապադովկիա և Եգիպտոսը աշխարհը:

Ընդարձակ պատմական տեսութեամբ ցոյց է տուած զէպի Պարսկաստան և զէպի Բիւզանդական կայսրութեան երկիրները՝ Փոքր Ասիա և Բալկանեան թերակղզի կատարուած յօժարակամ և բռնի գաղթերը: Տեղեկութիւններով առանձնապէս հարուստ են Կիլիկիայի և Եգիպտոսի սկզբնական գաղթականութիւնների

պատմութիւնները: Մեծ խնամքով մշակուած Սելջուկների տիրապետութեան շրջանում զէպի Փոքր Ասիայի գաւառները գաղթած հայերի և այնտեղ հաստատուած գաղութների պատմութիւնը. բաւական մանրամասնօրէն ցոյց է տուած հայերի հետզհետէ տարածուելն ու հաստատուելը Արևմտեան Փոքր Ասիայի գիւղերի և քաղաքների մէջ և նրանց որտեղից եկած լինելը: Մշակուած է և նոր տեղեկութիւններով հարուստ Հիւսիս-Արևելեան Պարսկաստանի՝ Վրկանքի, Սազաստանի, նա և Թաթարստանի հայ գաղթականութիւններին վերաբերեալ գլուխը:

Ընդհանրապէս առանձին ուշադրութիւն է դարձրել հեղինակը ժողովրդին բռն երկրից վտարող և մի գաղթավայրից միւսը մղող պատճառների վրայ. աշխատել է մանրամասն նկարագրել գաղութների ձևաւորուելը, բաժանուելը և գնադան մասերի ցրուելը հեռաւոր երկիրներ: Նոյնպիսի խնամքով չէ ներկայացրել գաղութների ներքին կեանքը նոր բնակավայրում, շրջապատող բնական և քաղաքական—հասարակական ազդեցութիւնները, գաղութների հետզհետէ ձուլուելու և անհետանալու պատմութիւնը, որ ամենից հետաքրքրականը և ուսանելին կը լինէր: Դրա համար, անշուշտ, հեղինակը պահանջուած չափով աղբիւրներ չունէր իւր տրամադրութեան տակ, սակայն եղած աղբիւրներից էլ ըստ հնարաւորութեան չէ օգտուել այս խնդիրը լուծելու համար:—

Յաւելուածը, որ մի ամփոփ տեսութիւն է հայոց եկեղեցական վարչութեան կազմակերպման և առաջնորդական վիճակների առաջ գալու աստիճանաբար տարածուող գաղութների մէջ և նրանց զուգահեռաբար, ինքն ըստ ինքեան հետաքրքրական է և կարևոր լրացում գաղթականութեան պատմութեան:

Գրքի մէջ զետեղուած 20 հատ աշխարհագրական քարտէզները, գովելի խնամքով պատրաստած, աննշան անճշտութիւններով հանդերձ, պարզ լուսաբանում են և դիտելի դարձնում Հայաստանի սահմաններից դուրս պատմութեան ընթացքում հետզհետէ հաստատուած գաղութների աշխարհագրական դիրքը և նրանց ճիւղաւորումները:

Պ. Ա. Ալպոյաճեանի այս աշխատութիւնը, թէև ունի մեր ցոյց տուած բանասիրական թերութիւնները, որոնք վերաբերում են աղբիւրների կիրարկմանը և գրական մշակման եղանակին, պարունակելով հարուստ, և շատ դէպքերում նոր տեղեկութիւններ գաղթականութիւնների պատմութեան վերաբերեալ, այլ և լուսաբանուած լինելով քննական—պատմական հայեացքով, օգտակար ընթերցանելի և ուսանելի գրուածք է և մի կարևոր օժանդակ ընդարձակ մտքով հայ ցեղի պատմութեան ուսումնասիրութեանը, ուստի և ցանկալի է նրա տպագրութեամբ հրատարակումը:—

Մկրտիչ քահ. Ղազարեան

20 Մարտի 1910 թ.

Պետերբուրգ

6. ԶեկոնիՅՈՒՄ «ԲՆԱԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԲԱՌԱՐԱՆԱԿԱՆ ՍՏԱՏԻՍՏԻԿԱ ԵՒ ՀԱՅԵՐԷՆԸ, ԳՐՈՒԱԾՔԻ ՄԱՍԻՆ:

Այս աշխատութիւնը բաղկանում է երկու մասից: Առաջին մասը լեզուագիտական մի ուսումնասիրութիւն է՝ բնագաղութական և փիլիսոփայական տեսակէտից (լեզուի ինչութիւնը, ծագումը, զարգացման օրէնքները, բառ և գաղափար և այլն), ինչպէս և քննադատութիւն լեզուի ուսումնասիրութեան բառարանագրութեան սովորական մեթոդների: Երկրորդ մասը՝ Դունայ ժողովի կանոնադրքի բառարան է, կազմուած այն նոր՝ ստատիստիկական մեթոդով, որի էութիւնն ու առաւելութիւնները հեղինակը բացատրում է իւր աշխատանքի առաջին մասում:

Հեղինակը լեզուն համարելով բնագիտական մի երևոյթ՝ եզրակացնում է, որ նրան ուսումնասիրելու համար հարկաւոր է գործ դնել բնագիտական մեթոդները և յատկապէս վիճակագրութիւն (ստատիստիկա): Նա գտնում է, որ բոլոր մինչև այժմ կատարուած ուսումնասիրութիւնները ոչ միայն հայ, այլ բոլոր ուրիշ լեզուների մասին, բոլոր հայ և օտարլեզուեան բառարանները շատ և շատ հեռու են կատարեալ լինելուց, քանի որ չեն կատարուած բնագիտական ուսումնասիրութեան մեթոդով: Նա առաջարկում է հայերէնը ուսումնասիրել այդ նոր մեթոդով.—կազմել ստատիստիկական բառարան և այդպիսի բառարանի ստատիստիկական ուսումնասիրութիւնից հանել եզրակացութիւն:

ներ հայ լեզուի և նրան ստեղծող ու գործածող հայ ժողովրդի հոգեբանական և աղգադրական յատկութիւնների մասին:

Ստատիստիկական բառարան ասելով հեղինակը հասկանում է այնպիսի մի բառարան, որի մէջ ղետեղուած լինի ամեն մի հայերէն բառ՝ հետեւեալ ծաւալով մշակուած. քանի անգամ այդ բառը պատահում է ամբողջ գրականութեան մէջ և քանի անգամ որ հեղինակի մօտ. քանի անգամ և ինչ նշանակութեամբ և որ հեղինակի մօտ. քանի անգամ ինչ քերականական ձևով (հոլովով, թուով, ժամանակով, դէմքով և այլն) և որ հեղինակի մօտ,—իւրաքանչիւր դէպքում դնելով նախադասութիւնը, որի մէջ բառը գործ է ածուած, ինչ ուղղագրական վարիանտներ ունի այդ բառը ձևագրների մէջ, և որի մէջ ինչ վարիանտով և այլն: Այս նպատակին հասնելու համար նախ պէտք է ունենալ քննական հրատարակութիւն բոլոր հին հեղինակների՝ մանրամասն վարիանտներով. ապա հեղինակի առաջարկած ծրագրով կազմել յատուկ ստատիստիկական բառարան ամեն մի հեղինակի համար. վերջը համախմբել բոլոր այդ յատուկ բառարանները մի մայր բառարանի մէջ այբուբենական կարգով. այնուհետև այդ շտեմարան բառարանի մատակարարած նիւթերից, ստատիստիկական ճանապարհով, հանել բառագիտական, ձևագիտական, քերականական, ինչպէս նաև հոգեբանական, պատմական և այլն եղրակացութիւններ հայ լեզուի և ժողովրդի մասին:

Բայց որովհետև այսպիսի ծրագրով յատուկ բառարաններ կազմելը ահագին ժամանակ է պահանջում, — հեղինակը փորձով տեսել է, որ մի երես գրուածքից լիակատար բառարանագրական նիւթ հաւաքելու համար մի օր է պահանջում, — ուստի հեղինակը

յաջողել է հնարել մի մեքենայ, որ գործը շատ հեշտացնում ու արագացնում է. այս մեքենայի շնորհիւ՝ սովորական եղանակով 200 օր պահանջող աշխատանքը մի քանի ժամում զուլիս է գալիս, և բոլոր հին հայ հեղինակների լիակատար յատուկ բառարանները, որոնց համար սովորական եղանակով գուցէ 100 տարուայ աշխատանք պէտք լինէր՝ կարելի է կազմել և՛ րեք ամսուայ ընթացքում: Ինքը այս մեքենան փորձել է՝ Ղ. Փարպեցուց և Աստուածաշնչից իւր ծրագրով բառարանագիտական նիւթ հաւաքելու, և փորձը պատկուել է յաջողութեամբ. — Փարպեցին աւարտել է 2 օրում, Աստուածաշունչը 3 օրում:

Վերոյիշեալ փիլիսոփայական — հոգեբանական — լեզուագիտական բազմաթիւ բարդ հարցերը, որոնց վրայ այնքան աշխատել են և աշխատում են շատ հմուտ գիտնականներ՝ մեր հեղինակը լուծում է ամենայն հեշտութեամբ, արձակելով վճիռ — պատգամներ: Այս երևոյթի պատճառն ույն է, որ հեղինակը ծանօթ չէ այն նիւթին, որի մասին գրում է, ծանօթ չէ այն ընդարձակ գրականութեան եւրոպական լեզուներով, որ նուիրուած է այդ հարցերի քննութեան: Նա լուծում է ամենադժուար խնդիրներ նոյնպիսի միամտութեամբ՝ ինչպէս որ երեսնա լուծում է աստղերի էութեան խնդիրը, ասելով թէ ճրագներ են: Այս հարցերի նկատմամբ հեղինակը դռնվում է դեռ այն վիճակում, որ դեռ չգիտէ թէ չգիտէ. երբ նա բաւական պարապի, գոնէ մի քանի լաւ գրքեր կտրդայ այդ հարցերի վերաբերմամբ՝ այն ժամանակ կգիտենայ որ չգիտէ:

Չունենալով գիտական պատրաստութիւն առաջադրած հարցերի գոհացուցիչ լուծման համար՝ հեղինակը զուրկ է նաև մեթոդի դիսցիպլինից. — մարդ չէ

կարող հետեւել նրա մտքին, թէ ինչ է ուզում հերքել կամ ապացուցանել. ինչպէս է գուրս բերում եզրակացութիւններ և ինչու համար. անկապ ֆրազներ, հակասութիւններ, անտրամաբան դատողութիւններ, համեմուած տեղի և անտեղի գործածուած գիտական տերմիններով և իբր—գիտական դարձուածքներով, և այս բոլորը չափազանց անգրագէտ, անկանոն լեզուով և անթիւ քերականական և ուղղագրական սխալներով—ամբողջը ներկայացնում է մի քաօս մտքերի և բառերի, մի բառավիժուածք, որի մէջ դժուար է դանդաղ մտքի հետեւողականութիւն և որը երբեմն ուղղակի անկարելի է հասկանալ:

Գալով հեղինակի գործնական առաջարկութեան, ստատիստիկական բառարան կազմելուն, իմ կարող է ասել, թէ հեղինակի ծրագրով, և դեռ աւելի լայն և աւելի լաւ մշակուած ծրագրով, բառարան ունենալը ֆնասակար է: Կամ օգտակար չէ: Ի՞նչու չլինի այնպիսի մի բառարան, որի մէջ մի բանասէր կամ վիճակագրական ախտով բոնուած հարցասէր մի մարդ կարողանայ ճիշտ տեղեկութիւն գտնել, թէ օրինակ «սենեակ» բառը քանի անգամ է գործածուած հին հայոց ամբողջ մատենագրութեան մէջ, և յատկապէս որ հեղինակը քանի անգամ, ինչ նախադասութիւնների մէջ և ինչ իմաստով, ինչ քերականական ձևերով և այլն. կամ կարողանայ նրանից իմանալ, թէ բացի երեք դէմքերից որը քանի անգամ է պատահում բոլոր հեղինակների մօտ և յատկապէս որ հեղինակի մօտ որ դէմքը քանի անգամ... Թող լինի այդպիսի բառարան՝ ցանկացողների համար: Բայց, մի կողմ թողնելով շատ տեխնիկական առարկութիւններ, հարց է, թէ արժէ արդեօք այդպիսի մի հսկայական գործի վրայ դնել անհուն աշխատանք և միլիոնաւոր ընթերցանք. կոմյ նա այնպիսի

ծանրակշիռ գիտական հետեւանքներ, որոնց կարելի լինի հաւատ ընծայել և որոնք կարելի չլինէր ձեռք բերել ուրիշ՝ աւելի հեշտ և աւելի վստահելի միջոցներով:—Ձեռք կարծում: Հեղինակը, իբրև փորձ, ներկայացրել է իւր կազմած ստատիստիկական բառարանը մի փոքր գրուածքի (իւր աշխատութեան երկրորդ մասը, որ պարունակում է 482 բառի բառարան 61 երեսի վրայ): Բայց ի՞նչ եզրակացութիւնների կամ արդիւնքների է հասել այդ աշխատութեամբ:—Ոչ մի այնպիսի բանի, որ առանց այդ աշխատանքին է յայտնի չլինէր, կամ առանց այդպիսի աշխատանքի կարելի չլինէր աւելի հեշտ միջոցով իմանալ: Իսկ ինչ որ միայն այդպիսի աշխատանքի միջոցով կարելի է պարզել—զուտ վիճակագրական տեղեկութիւններ ձևերի գործածութեան քանակի մասին՝ գործնական կարևորութիւնից զուրկ է:

Վերոյիշեալ գիտողութիւնների հիման վրայ ես գալիս եմ այն եզրակացութեան, որ «բնալեզուագիտական կամ բառարանական ստատիստիկա» աշխատանքը զուրկ է գիտական և գրական արժանաւորութիւններից:

Բայց անկախ սրանից՝ մեծ արժէք ունի, իբրև տեխնիկական գիւտ, հեղինակի հնարած մեքենան, որ ընդունակ է մարդկային սովորական աշխատանքը՝ որևէ գրուածքի բոլոր բառերը լրիւ հաւաքելու գործում՝ աւելի քան 400 անգամ կրճատելու: Եթէ յիշուի ճիշտ է հեղինակի յայտնածը իւր գիւտի մասին, ապա սա արժանի է, ոչ թէ Ղուկասեան մրցանակին, որի նպատակներին չէ համապատասխանում, այլ ակադեմիականների և գիտական ու տեխնիկական այլ հաստատութիւնների մրցանակներին, քանի որ ընդհանուր մարդկութեան համար օգտակար մի աչքի ընկնող գիւտ կլինի, ոչ միայն բառարանագրութեան, այլ և գիտութեան

ուրիշ գաւառներում գործադրելի Պէտք է միայն ձեռն-
հաս անձերի կօնտրոլի տակ այդ մեքենան փորձել:

ՍՏ. Մալխասեան,

22 մարտի 1909 թ.

Թիֆլիս.

**7. ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ. ՊԱՏՄԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԽԱՉՍՏՈՒՐ ԲԱԲԱՅԵԱՆԻ
ԹԻՖԼԻՍ. 1908**

Ներկայ գրքոյկը, որ «պատմական ուսումնասիրու-
թիւն» է կոչուում, ծանօթ չէ հայագիտութեան վերջին
եզրափակութիւններից և ոչ մէկի հետ: Այն, ինչ որ
այստեղ ասւած է Բագրատունեաց տոհմի ծագման, զար-
գացման և կատարած գերի մասին, մինչև թագաւորա-
կան տիրոջ սին հասնելը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ կրկնու-
թիւն Չամչեանի և հին դպրոցի այլ ներկայացուցիչների
ասածների: Հեղինակը շատ լուրջ կերպով իր հայեացք-
ները հիմնում է Մ. Խորենացու լեզենդների վրայ և
շատ լուրջ կերպով մէջ է բերում բոլոր այն վէպերը,
որ մեր նախորդ սերունդը զուտ պատմական ճշմար-
տութիւն էր ընդունում: Ինչ խօսք, որ առանց լիակա-
կատար պատմական նիւթերի, առանց գիտական մե-
թօդի և առանց պատմագիտական նորագոյն հետազո-
տութեանց ծանօթութեան մի գնահատելի ուսումնասի-
րութիւն տալ Բագրատունեաց նախարարութեան մա-
սին անկարելի էր:



2793

